

ՀԱՅ-ՔՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Արտյոմ Մարգարյան

Հոդվածում անդրադարձ է արված հայ-բյուզանդական փոխհարաբերություններին քաղաքակրթական կտրվածքով, այդ թվում նաև կայսրությունում բյուզանդահայերի գործունեությանն՝ ընդհանուր գծերով: Թեև հոդվածում անմիջական կապ չի անցկացվում անցյալի և այսօրվա իրողությունների միջև, սակայն նրանում շոշափված նյութն, անշուշտ, արդիական հնչողություն ունի ժամանակակից համաշխարհային ինտեգրացիայի դիտանկյունից և կարող է հետաքրքրություն ներկայացնել այդ գործընթացին հայության մասնակցության հեռանկարները դիտարկելիս:

I

Այսօր, երբ մարդկությունը վճռականորեն թևակոխել է գլոբալացման շրջափուլը, և առաջին պլան են մղվում քաղաքակրթությունների միջև հարաբերությունները, դրանցից յուրաքանչյուրի համար առաջնային խնդիր է դառնում այն միջոցների որոնումը, որոնցով հնարավոր կլինի պահպանել սեփական ինքնությունը: Առավել ևս դա վերաբերում է այնպիսի գոտրիկ քաղաքակրթության, ինչպիսին հայկականն է: Գլոբալացման մարտահրավերներին Հայաստանն ու հայությունը սկզբունքորեն կարող են տալ առնվազն երեք պատասխան. ա) «պատերազմ» հայտարարել այդ գործընթացին, «փակել» նրա առաջ սեփական «դռները», ստեղծել սեփական գոյության ջերմոցային պայմաններ, բ) կուլ գնալ գլոբալացմանը՝ չկարողանալով աշխարհին ներկայանալ սեփական դեմքով, և վերածվել, լավագույն դեպքում, ավելի խոշոր քաղաքակրթական սուբյեկտների խղճուկ կցորդի, գ) մոբիլիզացնելով սեփական քաղաքակրթական ռեսուրսները՝ արժանի կերպով ինտեգրվել համաշխարհային գործընթացներին և միասնական աշխարհի ընդհանուր սահմանների ներքո եզրագծել սեփական ազգային-քաղաքակրթական սահմանները: Ակնհայտ է առաջին երկու դեպքերում հայոց քաղաքակրթության զարգացման հեռանկարների բացակայությունը, ինչը չի կարելի ասել երրորդ պարագայում:

Քաղաքակրթական ռեսուրսների մոբիլիզացիան, ի թիվս տարբեր

միջոցների, ներառում է ռազմավարական նշանակության այնպիսի իրողություն, ինչպիսին սեփական պատմական անցյալի ամբողջական պատկերի ստեղծումն է: Նման պարագայում սեփական պատմությունը դիտարկվում է թե՛ որպես ներքին հարաբերությունների օրգանական ամբողջություն (պատմության ամբողջականության ու շարունակականության հայեցակարգ), թե՛ որպես արտաքին հարաբերությունների համակարգի բաղադրամաս (ազգային պատմություն՝ համաշխարհային պատմության համատեքստում): Պատմական կառույցի թե՛ ներքին, թե՛ արտաքին հարաբերությունները ներկայանում են իբրև ապացուցելի (հետևաբար՝ ըմբռնելի) իրողություններ, ինչը թույլ է տալիս հասկանալ ներկայի ակունքները և զգալի չափով ուրվագծել ապագայի հեռանկարները: Ուստի մշտապես արդիական է մնում շարունակական անդրադարձը պատմական անցյալին, վերջինիս վերիմաստավորումը: Ճիշտ է, ներկայի համեմատ տարբեր են անցյալի հանգամանքները, բայց նույնն են (իհարկե, խոշոր հաշվով) պատմական զարգացման սկզբունքներն ու հարացույցները: Եվ վերջիններիս՝ յուրաքանչյուր անգամ նորովի բացահայտումը կարող է բերել ազգային ինքնակայացման նոր հանգրվանների:

II

Վերոշարադրյալի դիտանկյունից հայացք զցելով հայոց պատմության վրա՝ կարելի է նկատել, որ հայությունն անմասն չի եղել անցյալում տեղի ունեցած մի շարք գլոբալացման գործընթացների, ինչպիսիք էին իրանական, հելլենիստական, ապա՝ հռոմեական աշխարհակարգերի հաստատումը՝ հին դարերում, քրիստոնեության տարածումը՝ միջնադարի արշալույսին, ավելի ուշ՝ այսպես կոչված «բյուզանդական ընկերակցության» ձևավորումը¹: Դրանց շարքում որոշակիորեն առանձնանում է վերջինը: Նախ՝ այն այս կամ այն չափով ներառում էր նախորդների արդյունքները և, լինելով նրանց տրամաբանական շարունակությունը, կրում էր ավելի ընդգրկուն ու խորքային բնույթ: Եթե, օրինակ, Ք.ա. VI դարում ստեղծված պարսկական աշխարհակալությունը (որի մասն էր կազմում նաև Հայաստանը) հենվում էր հիմնականում ռազմավարչական մեխանիզմների վրա, պարունակում էր բռնության զգալի տարր և մեծավ մասամբ ներկայացնում էր տարբեր ժողովուրդների արհեստական միավորում, ապա «բյուզանդական ընկերակցությունում» որպես միավորիչ գործոն ընդգծված էր մշակույթի դերը:

¹ Անշուշտ, հիշատակված գործընթացները գլոբալացում կարելի է անվանել վերապահումներով: Ներկայի համեմատ, այս կամ այն չափով սահմանափակ էին դրանց աշխարհագրությունն ու ընդգրկունությունը: Բացի այդ, անցյալի ինտեգրացիոն գործընթացները կրում էին դիսկրետ բնույթ: Մյուս կողմից, սակայն, ակնհայտ է դրանց պատմական դերը ժամանակակից համաշխարհային ինտեգրացիայի նախապատրաստման գործում:

«Ընկերակցության» ժողովուրդների միջև ակտիվ մշակութային փոխազդեցություններն ավելի հաճախ ընթանում էին անկախ քաղաքական հարաբերությունների բնույթից և այն բանից, թե արդյոք այդ ժողովուրդները միավորված էին մեկ պետության մեջ: Երկրորդ՝ «բյուզանդական ընկերակցությանը» Հայաստանը մասնակից դարձավ որպես նախորդ ժամանակաշրջանների համեմատ ավելի հասուն քաղաքակրթություն: Մինչև վաղ միջնադարը Հայաստանը գտնվում էր Մերձավոր Արևելքի (առաջին հերթին՝ Իրանի) քաղաքակրթության ստվերում և ապրում էր, այսպես ասած, ինկուբացիոն մի շրջափուլ: Դրա պարագայում Հայաստանում ընթանում էր սեփական և ներմուծված քաղաքակրթական տեխնոլոգիաների աստիճանական կուտակում, որոնց մեջ կարևորագույն նշածողեր կարելի է համարել քրիստոնեության ընդունումն ու հայոց գրերի գյուտը: Առաջինը (մանավանդ Արշակունյաց թագավորության անկման պայմաններում) իր հետ բերեց կեցության նոր հարացույցներ: Երկրորդն էլ, ամբողջացնելով հայոց քաղաքակրթության ձևակերպումն իբրև ինքնուրույն տեղեկատվական դաշտ, սովեց նոր հարացույցների կենսագործման հնարավորություններ:

Հայ-բյուզանդական ինտեգրացիոն գործընթացներն առանձնանում էին նաև իրենց ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական պայմաններով: Հայաստանը, ինչպես հայտնի է, հնուց ի վեր գտնվում էր քաղաքակրթությունների (պարզեցված ձևով՝ Արևելքի ու Արևմուտքի) խաչման-բախման գոտում: Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքների (Ք.ա. IVդ.) արդյունքում տարածաշրջանում սկիզբ առած ինտեգրացիային նոր թվականության սկզբին փոխարինելու եկավ լարվածության աստիճանական աճը մի կողմից Հռոմեական տերության մեջ ամփոփված Միջերկրածովյան աշխարհի, մյուս կողմից՝ նրան հակադրված այս կամ այն արևելյան տերության (որոշ չափով՝ պարթևականի, ավելի արտահայտված՝ սասանյանի, վերջապես՝ արաբականի) միջև: Հակադրությունն իր ծայրակետին հասավ, երբ Արևմուտքն ու Արևելքը միմյանցից բաժանեցին քրիստոնեական ու իսլամական կրոնները: Երկու բևեռների միջև անջրպետի առաջացման պայմաններում Հայաստանի համար աստիճանաբար անիրական էր դառնում դեռևս հայոց Տրդատ Ա արքայի (52-80-ական թթ.) հռչակած արտաքին քաղաքական դոկտրինը՝ «բարեկամություն Հռոմի և Իրանի հետ» [1, էջ 31]: Արդեն III-IV դարերում, Իրանում տեղի ունեցած սասանյան հեղաշրջումից հետո Հայաստանի առաջ կանգնեց արտաքին քաղաքական (և քաղաքակրթական) կողմնորոշման հարցը, որը Տրդատ Բ արքան (298-330թթ.) վճռականորեն լուծեց հոգուտ Հռոմի (Բյուզանդիայի): Նախկինում վերջինից Հայաստանի ունեցած ձևական կախումը ստացավ իրական կերպարանք: Ավելին, Հայաստանի և Հռոմի միջև հարաբերությունները ձեռք բերեցին նոր հոգևոր

Իմաստ: Բանն այն է, որ հռոմեական կայսր Դիոկղետիանոսի (284-305թթ.) օրոք մշակվեց (կամ, համենայն դեպս, իր ավարտուն տեսքը ստացավ) «իդեալական կամ հոգևոր ընտանիքի» գաղափարը, որի մեջ հիերարխիկ սկզբունքով ընդգրկվում էին ինքը՝ կայսրը («հոգևոր հայրը»), նրա կրտսեր գահակիցները («կրտսեր հոգևոր եղբայրները») և Հռոմից կախյալ միապետներն ու իշխանավորները («հոգևոր զավակները») [2, էջ 41; 3, cc. 24-25; 4, c. 246]: Կայսրությունում քրիստոնեության հաղթանակից հետո այդ գաղափարը ստացավ նոր հիմնավորում: IVդ. սկզբին եկեղեցու նշանավոր հայր Եվսեբիոս Կեսարացու տված ձևակերպման համաձայն՝ Հռոմեական կայսրությունը հանդիսանում էր Աստծո երկնային իդեալական թագավորության երկրային պատկերը: Իր հերթին, կայսրը դիտվում էր որպես Աստծո նմանակն ու բոլոր հավատացյալների «հոգևոր հայրը», ողջ քրիստոնյա աշխարհում բարեկարգության աղբյուրն ու երաշխավորը [5]: Քրիստոնյա աշխարհը՝ օյկումենեն, ընկալվում էր իբրև մեկ ընտանիք (միասնական համաշխարհային եկեղեցով հանդերձ), ուր Հռոմեական (395թ. վերջինիս բաժանումից հետո՝ Արևելահռոմեական կամ Բյուզանդական) կայսրությանը հատկացված էր կենտրոնական տեղը: Արևմտյան Եվրոպայում այս գաղափարը, թեկուզ ձևականորեն, ընդունելության էր արժանանում մինչև 800թ., երբ ֆրանկների թագավոր Կարլոս Մեծը հռչակվեց հռոմեական կայսր [6, c. 120]: Բյուզանդական կայսրերի և հայ Բագրատունի թագավորների՝ որպես «սիրելի (հոգևոր) հայրերի և որդիների» միջև հարաբերությունների մասին են խոսում միջնադարյան աղբյուրները [7, էջ 143, 163, 203; 8; 4, c. 250; 9, p. 234]: Այդ հարաբերություններն ունեին սակրալ բովանդակություն և ժառանգված էին Արշակունիների ժամանակից, երբ դրանք պարունակում էին իրական քաղաքական իմաստ: Արշակունիների թագավորության անկումից հետո (համենայն դեպս, VIդ. վերջից-VII դարից) հռոմեական (բյուզանդական) աշխարհի հիերարխիայում հայոց թագավորների տեղը զբաղեցրին նախարարները և հայոց իշխանները: Ըստ այդմ, նրանք բյուզանդական արքունիքից ստանում էին պատվավոր տիտղոսներ՝ կուրապաղատ, պատրիկ, մագիստրոս և այլն, ու դիտարկվում էին իբրև կայսեր «հովանավորյալներ»: Այդ սակրալ կապերը շարունակվեցին նաև այն ժամանակ, երբ կայսրությունն արաբական նվաճումների արդյունքում կորցրեց Հայաստանի վերահսկողությունը: Մահմեդականների տիրապետության տակ գործող հայ ընտրանու համար այդ կապերի պահպանումն ուներ բարոյական ու քաղաքական նշանակություն: Հռոմեական աստիճանակարգում տվյալ գործչի զբաղեցրած դիրքը բարձրացնում էր նրան մյուսների աչքում: Միաժամանակ կայսեր հետ «բարեկամական» հարաբերությունները միջոց էին ծառայում Հայաստանում արաբների քաղաքականությունը որոշակիորեն զսպելու համար: Վերջա-

պես, անհրաժեշտության դեպքում դրանք հայ նախարարներին թույլ էին տալիս ապաստան գտնել Բյուզանդիայում և ինտեգրվել տեղի հասարակական-քաղաքական կյանքին [9, pp. 233-239; 2, էջ 40]:

Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, Հայաստանի հետ Բյուզանդիայի առնչություններում (առնվազն մինչև XI դ. ներառյալ) առավել ընդգծված ու արդյունավետ էին հոգևոր ոլորտում ունեցած հարաբերությունները: Քրիստոնեության հետ նրանք որդեգրել էին, այսպես ասած, քրիստոնյա հանրությանը ներհատուկ այն առաքելությունը, որի էությունն էր՝ դրսևորվել որպես Աստծո պատվիրաններով ապրող հասարակություն՝ նոր Իսրայել [7, էջ 187, 219, 10, c. 88]: Ի տարբերություն հեթանոսական շրջանի այդպիսի առաքելությունների, քրիստոնեականը բնորոշվում էր թե՛ ներքին, թե՛ արտաքին ուղղվածությամբ: Ներքին հարաբերություններում այն հանգում էր քրիստոնեության վրա խարսխվող արժեքների կերտմանը կյանքի տարբեր ոլորտներում (հասարակական միտք, արվեստ, սոցիալական հարաբերություններ, իրավունք և այլն), այսինքն՝ քրիստոնեության հոգևոր սահմանների ընդլայնմանը: Արտաքին դրսևորումն Աստծո խոսքի տարածումն էր ոչ քրիստոնյա ժողովուրդների մեջ (քրիստոնեության աշխարհագրական սահմանների ընդլայնում), ինչպես նաև հավատակից ժողովուրդների հետ մշակութային արժեքների ակտիվ փոխանակությունը: Վերջին իմաստով լավագույն գործընկերներ ողջ քրիստոնեական օյկումենեում հանդիսանում էին, շնորհիվ իրենց զբաղեցրած դիրքի, Բյուզանդիան և Հայաստանը: Գտնվելով քրիստոնեական աշխարհի սահմանին և սեփական ինքնության պահպանման համար մշտական պայքար մղելով հարևան թշնամիների դեմ՝ երկու երկրները, փաստորեն, կատարում էին քրիստոնեության առաջապահ պաշտպանների դեր՝ իրենց ընդհանուր պատմական խնդիրներով: Վաղ միջնադարում Եվրոպան վերապրել էր ողբերգություն և խոր անկում՝ կապված Հռոմի կործանման հետ: Իրենց հերթին, Արևելքի վաղ քրիստոնեական կենտրոնները՝ Ասորիքում, Եգիպտոսում, Միջագետքում, Կարթագենում և այլուր, VII դարում ենթարկվեցին արաբական նվաճումներին և աստիճանաբար կլանվեցին մահմեդական աշխարհի կողմից՝ զրկվելով հետագա հոգևոր զարգացման լայն հեռանկարներից: Նման պայմաններում Բյուզանդիան և Հայաստանը մի քանի դար մնում էին քրիստոնեական քաղաքակրթական արժեքները հարստացնող հիմնական կենտրոնները:

Բնականաբար, նրանց միջև համագործակցությունում գլխավոր դերը պատկանում էր Բյուզանդիային: Եվ դրա պատճառը ոչ միայն վերջինիս կայսրություն լինելն էր՝ բոլոր ռեսուրսներով հանդերձ: Այդ կայսրության գլխավոր առավելությունն անտիկ աշխարհից ժառանգված հզոր ավանդույթներն էին, որոնց ընդերքում էլ, ի միջի այլոց, ծնունդ էր առել քրիստո-

ներությունը: Այդ ավանդույթներին Հայաստանն անձանոթ չէր նախաքրիստոնեական շրջանում: Բայց միայն քրիստոնեության ընդունումից հետո իրական դարձավ դրանց հետ հայության լիարժեք ծանոթացումը: Բյուզանդիան, իսկ ավելի ձիշտ՝ նրա ակունքներում կանգնած հելլենիստական աշխարհը Հայաստանի առաջ հառնեց իբրև մշակույթի ոլորտներում համակեցական կյանքի կազմակերպման իդեալական հարացույցների կամ արքետիպերի մի աշխարհ՝ նմանակման արժանի: Եվ այս մոտեցման հիմքում այն գիտակցումն էր, որ հելլենական հոգևոր աշխարհն առաջինն էր ծավալվել մինչև օյկումենիկ սահմանները՝ ձեռք բերելով համաշխարհային արժեք [հմմ. 11, էջ 69, գիրք Ա, գլուխ Բ]: Ուստի Բյուզանդիան, համենայն դեպս սկզբնական շրջանում, Հայաստանի համար հանդես եկավ որպես քրիստոնեական կեցության յուրատեսակ օրենսդիր կենտրոն:

Առաջին հերթին կայսրությունից ընդօրինակվեցին եկեղեցական հիերարխիան, կանոնները, խորհուրդները, ծեսերն ու արարողությունները: Բյուզանդիայում IV-V դարերում տարածում գտած մի շարք դավանաբանական ուղղություններից Հայաստանում պաշտոնական ընդունելության արժանացավ Ալեքսանդրիայի հայրերի (հիմնականում՝ V դարի պատրիարք Սբ Կյուրեղի) ուսմունքը Քրիստոսի մեկ բնության մասին¹:

Եկեղեցու կազմակերպման ու գրերի գյուտի հետ հայերը կայսրությունից փոխառեցին նաև հոգևոր երգաբանությունը՝ մի քանի դար այն զարգացնելով բյուզանդականին համաքայլ: V դարում նորաստեղծ հայ հոգևոր երաժշտության մեջ ներմուծվեցին տարբեր ժանրեր՝ սաղմոս, օրհներգ (շարական), կցուրդ: Բյուզանդացիների նմանությամբ հայ եկեղեցականներն էլ երգեցողության մեջ հիմնական շեշտը դրեցին օրհներգերի վրա: Հունական եկեղեցուն հետևելով՝ VIII դարում սահմանվեց հայկական ժամերգության պաշտոնական երգացանկը՝ կանոնը: Բովանդակությամբ հունականին էր հարում նաև V դարում պատրաստված հայկական ժամագիրքը կամ աղոթամատույցը: Որպես հիմնական պատարագամատույց հայերն ընտրեցին IV դարում Բարսեղ Կեսարացու կազմածը: Ավելի ուշ՝ VI դարում Բյուզանդիայում ձևավորվեց և Հայաստանում ընդունելություն

¹ Պետք չէ միաբնակության ընդունումը հայ եկեղեցու կողմից (Դվինի 506թ. ժողովում) համարել ձգտում՝ վճռականորեն հակադրվելու Բյուզանդիային, ուր 451թ. Քաղկեդոնի տիեզերական ժողովում ընդունվել էր երկաբնակությունը: Հայ եկեղեցին ընդամենը հավատարիմ էր մնացել Եփեսոսի 431թ. տիեզերական ժողովի այն որոշմանը, որով հաղթանակել էր Սբ Կյուրեղի ուսմունքը: Բացի այդ, հայկական եկեղեցին հավանություն էր տվել Ջենոն կայսեր (474-491թթ.) միջոցառումներին՝ ուղղված քաղկեդոնականների հաշտեցմանը հակաքաղկեդոնականների հետ, որոնք Բյուզանդիայում դեռ մի քանի դար ստվար թիվ էին կազմում: Վերջապես, միաբնակությունը Հայաստանում ընդունվեց այն ժամանակ, երբ այդ ուսմունքը ժամանակավորապես ընդունվել էր հենց կայսրության իշխանությունների կողմից՝ Անաստասիոս Ա կայսեր (491-518թթ.) ջանքերով: Այլ հարց է, որ Հայաստանում և Բյուզանդիայում տարբեր դավանաբանական ուղղությունների հաղթանակն օբյեկտիվորեն նպաստեց նրանց որոշակի հակադրմանը:

գտավ քրիստոնեական երաժշտության ավանդական ձայնեղանակների համակարգը՝ ութձայնը (օկտոհիքոսը): Վերջապես, հույներից յուրացվեցին երաժշտությունը գրառելու (նևմագրության) սկզբունքները՝ սկիզբ դնելով խազագրության արվեստին [12, հ. 2, էջ 468, հ. 4, էջ 272, հ. 5, էջ 703, հ. 8, էջ 460, հ. 9, էջ 146-147, հ. 12, էջ 199]:

Հայ իրականության մեջ իսկական հեղափոխություն առաջացրեց ծանոթացումը հունական հասարակական մտքի ու գիտության հետ, որ հնարավոր դարձավ շնորհիվ հայոց գրի ստեղծման (ի դեպ՝ հիմնված գրության հունական սկզբունքի վրա): Գիտական ավանդույթներով հարուստ վաղ բյուզանդական կենտրոնները՝ Ալեքսանդրիա, Աթենք, Կոստանդնուպոլիս, Անտիոք, Եդեսիա, Բերիտոս, Տրապիզոն և այլն, V դարում կրթական օջախներ դարձան նաև հետաքրքրության շատ լայն շրջանակ ունեցող հայ երիտասարդության համար: Հունարեն լեզվի, քերթողական արվեստի և հելլենիստական գիտության մեջ հմտացածները ծավալեցին հսկայական թարգմանական աշխատանք: Կարճ ժամանակում հայերեն թարգմանվեցին բազմաթիվ հունական ստեղծագործություններ ամենատարբեր ոլորտներից՝ փիլիսոփայություն, տրամաբանություն, քերականություն, ճարտասանություն, պատմագրություն, գեղարվեստական գրականություն, աստվածաբանություն, վկայաբանություն, երաժշտական արվեստ: Թարգմանությունների հետ հայոց լեզվի մեջ ներմուծվեցին նաև հունարենին բնորոշ՝ մտքի հարստությունն ու նրբաճաշակությունը, խոսքի կուռ տրամաբանությունը, գիտական տերմինաբանությունը (հայկական համարժեքների ստեղծմամբ): Մի քանի դար (V-VIIIդդ.) տևած այս անդուլ աշխատանքն էլ կազմեց այսպես կոչված հունաբան դպրոցի գործունեության բովանդակությունը, որի շնորհիվ հնարավոր եղավ գիտության տարբեր ուղղությունների սկզբնավորումը բուն հայկական հողի վրա: Եթե V-VI դարերում թարգմանական գրականության մեջ առաջնությունը տրվում էր հունամանիտար գիտություններին, որոնք անհրաժեշտ էին ուղղադավան քրիստոնեության հիմքերը Հայաստանում զաղափարապես ամրապնդելու համար, ապա VII դարում, շնորհիվ Անանիա Շիրակացու գործունեության, մեծ նշանակություն տրվեց նաև բնագիտությանը: Հունական գիտական մտքի հետ հայերը յուրացրին նաև անտիկ աշխարհից ժառանգություն մնացած կրթական համակարգը՝ խարսխված «յոթ ազատ արվեստների» վրա (քերականություն, ճարտասանություն, տրամախոհություն, թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն, երաժշտական արվեստ):

«Հունասիրական» այս շարժումը, որի ակունքներում կանգնած էին Մահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը, չի դադարել ողջ միջնադարի ընթացքում և նոր վերելք է ապրել XI-XII դարերում (շնորհիվ Գրիգոր Մագիս-

տրոսի, Ներսես Շնորհալու և այլոց): Ընդհանուր առմամբ միջնադարում հայերեն են թարգմանվել մոտ յոթանասուն հելլեն հեղինակներ [13, էջ 151]: Թերևս, սխալված չենք լինի, եթե նշենք, որ այդ շարժման շնորհիվ հայ ինքնությունը սկսեց լիարժեքորեն գիտակցվել որպես համաշխարհային ամբողջի օրգանական մասը¹:

Բյուզանդական ազդեցությունը հայկական մշակույթի վրա պակաս նշանակալից եղավ ճարտարապետության ոլորտում: Վաղ քրիստոնեական շրջանում (IV-VIդդ.) հունական և ասորական ազդեցությամբ Հայաստանում կառուցվում էին կամարավոր բազիլիկներ, որոնք, սակայն, մեծ ժողովրդականություն չստացան [14, p. 58]:

Քանդակագործության մեջ հայկական արվեստը, ավելի մոտ լինելով որմնաքանդակի արևելյան արվեստին, համեմատաբար քիչ էր պարտական Բյուզանդիային, ուր առյուսաշեն եկեղեցիները հնարավորություն չէին տալիս զարգացնելու պատի վրա քանդակման տեխնիկան: Սակայն վաղ միջնադարում Հայաստանը որոշ չափով ընդօրինակել է կլոր քանդակի բյուզանդական ոճը (օրինակ, Զվարթնոցի տաճարում): Նույնպես և հայկական օրնամենտալ ձևերի մեծ մասը վերցվել է ուշ անտիկ շրջանի ձևերից, իսկ վաղ քրիստոնեական շրջանի որմնաքանդակները թեմատիկայով հարում են Բյուզանդական կայսրության արևելյան նահանգների արվեստին: Փոխարենը ողջ միջնադարում մեծ է եղել բյուզանդական ազդեցությունը հայկական կիրառական արվեստի վրա (մասունքների արկղեր, եռաձալիկ նկարներ, գրքերի արծաթագոծ կազմեր): Այդ ազդեցությունը նկատվում է թեմաների ընտրության, պատկերանկարչության, ոճի մեջ [14, pp. 84, 86, 98-99]:

Միջնադարյան կերպարվեստն այն ոլորտն էր, որը զարգացման ամենաբարձր մակարդակի հասավ հենց Բյուզանդիայում²: Ուստի և հայկական նկարչական արվեստը բոլորից շատ էր պարտական բյուզանդականին: Ճիշտ է, որմնանկարչությունն ու խճանկարչությունը Հայաստանում մեծ նշանակություն չստացան՝ կապված քարի օգտագործման հետ որպես շինանյութ, իսկ հայկական սրբապատկերների մասին դժվար է խոսել դրանց չպահպանվելու պատճառով: Սակայն հայկական մանրանկարչությունն ապրել է բուռն ծաղկում և մեծապես ազդվել բյուզանդականից (պլաստիկա, մանրանկարների մոնումենտալ բնույթ և այլն): VIIդ. սկզբին կաթողիկոսի տեղապահ Վրթանես Քերթոզի թողած վկայությամբ, ծաղկելու արվեստն իր օրերում Հայաստան էր ներմուծվել հունաց աշխարհից: Այնտեղից է յուրաց-

¹ Ասվածի լավագույն վկայությունը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» ու անհայտ հեղինակի «Աշխարհացոյցն» են, ուր Հայաստանը (համապատասխանաբար՝ նրա պատմական անցյալն ու աշխարհագրությունը) դիտարկված են համաշխարհային կառույցի շրջանակներում:

² Դա պայմանավորված էր ոչ միայն անտիկ շրջանի բարդ տեխնիկայի պահպանմամբ, այլև այն փրկչական դերով, որ բյուզանդացիները վերագրում էին զեղանկարչությանը [15, c. 469; 10, c. 166]:

վել մանրանկարում անմիջապես նախորդող կամ հաջորդող էջի տեքստը պատկերելու հնարքը, ինչպես նաև 12 գլխավոր քրիստոնեական տոների հետ կապված պատկերների ցիկլը, որը կայսրության որմնանկարչության և սրբապատկերման մեջ հաստատվել է X դարում: Վերջապես, բյուզանդական ազդեցությամբ հայ մանրանկարչության մեջ մշտապես վառ է պահվել բնապաշտությունը [14, pp. 110, 113, 115, 119, 133, 135]:

Բյուզանդական ազդեցության մի առանձին փուլ է հանդիսանում XI-XIV դդ. կիլիկյան արվեստը. շինարարություն, մանրանկարչություն, կիրառական արվեստ (գրքերի կազմում) [14, pp. 61, 98, 122, 126]:

Հայկական արվեստը, սակայն, չի հանդիսացել բյուզանդականի գավառական դրսևորումը, ոչ էլ, առավել ևս, նրա կրավորական պատճենը: Ազդվելով բյուզանդական արվեստից՝ հայկականը դրսևորել է ինքնատիպություն և հունական մոտիվները ենթարկել է սեփական ձևափոխումների: Եվ իր հերթին մեծապես ազդել է հարևան մշակույթի վրա:

Ինքը՝ բյուզանդական մշակույթը՝ շարունակ հանդես է եկել որպես անտիկ ավանդույթների ու տարածաշրջանի ժողովուրդների ստեղծած արժեքների սինթեզ, որում իրենց արժանի տեղն ունեն նաև հայկական արժեքները: Որոշակիորեն պարզված է հայ էպիկական, գուսանական և հոգևոր երաժշտության ազդեցությունը միջնադարի հունական էպիկական երգերի («Դիգենիա Ակրիտաս», «Երգ Արմուրիսի որդու մասին», «Ասք Թեոփյուլակտոսի մասին») ստեղծման, հոգևոր երաժշտության մեջ՝ զարդոլորում ոճի և ուրծայնի համակարգի հետագա զարգացման գործում [12, հ. 2, էջ 468, հ. 3, էջ 378]: Փոխադարձ է եղել դեկորատիվ հարդարումներին նախապատվություն տվող հայկական կերպարվեստի ազդեցությունը բյուզանդականի վրա: Այսպես, IX դարից հունական մանրանկարներում պատկերներից գատ առաջ է եկել գծագարը: Հաջորդ դարում բյուզանդական գրքերի գեղագարդման մեջ նկատվում են հայկական մոտիվները՝ թռչունների պատկերներ, նռան տերևներ, հատապտուղների թփեր և այլն: XI դարում ստեղծված հայկական Ավետարաններում ի հայտ են եկել մկրտություն ստացող կամ խաչված մերկ Քրիստոսի պատկերներ, որոնք ընդունելություն են գտել նաև բյուզանդական ու եվրոպական կերպարվեստում: Հայկական մանրանկարչությունում մշակված հնարքներն իրենց արտացոլումն են գտել կապադովկիական եկեղեցիների IX-XI դդ. որմնանկարներում: Հայկական դեկորացիայի ազդեցությունն առկա է նաև բյուզանդական քանդակագործության մեջ: IX դարից հայկական մոտիվների նմանությամբ Բյուզանդիայի եվրոպական մասի մոնումենտալ շինությունների վրա քանդակվել են իրական ու երևակայական կենդանիներ, միահյուսված երիզներ, զարդարված խաչեր: Հայկական խաչքարերի ազդեցությունն են կրում Հունաստանի X-XI դդ. խա-

չազարդ սալիկները [14, pp. 108-109, 120, 136; 4, c. 480]:

Հայկական միջնադարյան արվեստում, թերևս, ամենից ինքնատիպը և բյուզանդական արվեստի վրա ամենամեծ ազդեցություն թողածը ճարտարապետությունն էր: Վերջինիս գլխավոր հատկանիշներն էին թե՛ ներքին թե՛ արտաքին՝ միմյանցից տարբեր, բայց հմտորեն փոխկապակցված պլանավորումը և դրա հետ կապված՝ կառուցվածքային ու ֆունկցիոնալ խնդիրների ենթարկումը դեկորատիվ (պլաստիկ ու երկրաչափական) էֆեկտների: Հայկական ճարտարապետության հիմնական ներդրումը բյուզանդական շինարարական արվեստի մեջ եկեղեցիների խաչա-գմբեթավոր տիպն էր: Թեև գմբեթը որպես ճարտարապետական տարր ներմուծված է եղել Հայաստան, սակայն, ըստ նշանավոր արվեստագետ Յոզեֆ Ստրժիգովսկու (*J. Strzygowski. Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918*), հենց այստեղ են գմբեթավոր եկեղեցիները ստացել ամբողջական զարգացում (VII-XI դդ.)՝ շինարարական բարդ խնդիրների լուծմամբ: Գմբեթավոր տաճարները բաժանվել են երկու տիպի՝ գմբեթավոր բազիլիկաներ և կենտրոնացված պլանով եկեղեցիներ: Վերջիններս, իրենց հերթին, ներկայացված են եղել եռատերև (*трилистник*), քառատերև (*четырёхлистник*), խորշերի (*ниша*) վրա հենվող և քառանկյուն պլան ունեցող եկեղեցիներով, գմբեթավոր սրահ-եկեղեցիներով և խաչա-գմբեթավոր եկեղեցիներով: Փոխանցվելով Բյուզանդիա՝ հայկական ճարտարապետական ձևերը ենթարկվել են որոշ փոփոխման (օրինակ, խորշերի վրա հենվող քառանկյան փոխարինումը թմբկազևանով XI դ.՝ համաձայն Ստրժիգովսկու), սակայն հիմնական գծերով պահպանվել են: Եռատերև պլանը լայնորեն կիրառվել է Աթոս սուրբ լեռան (Հունաստան) վանքերի եկեղեցիներում՝ սկսած հնագույնից՝ Մեծ Լավրայի կաթողիկե տաճարից (961թ.), որի հիմնադիրն էր ազգությամբ հայ Սբ Աթանասիոսը: Ինչ վերաբերում է հայկական խաչա-գմբեթավոր տիպին, այն 880-ական թթ. դարձավ ստանդարտ հատակագիծ բյուզանդական ճարտարապետության մեջ՝ շնորհիվ Բարսեղ Ա կայսեր (867-886թթ.) կողմից պալատական «Նեա» (Նոր) եկեղեցու կառուցման: Ըստ երևույթին, Բյուզանդիան Հայաստանին ու Վիրքին է պարտական IX դարում փոխառված երկհարկ օժանդակ մատուռների տիպի զարգացմամբ, որի նախնական ձևերն այդ երկրներն էին անցել Ասորիքից ու Եգիպտոսից ամենաուշը VII դարում: Բյուզանդական ճարտարապետությունը Հայաստանից է փոխառել նաև տրոմպը, որը Կոստանդնուպոլսում և Հելլադայում ընդունելություն է գտել X դ. վերջին-XI դ. սկզբին: Այս ժամանակ հայ ճարտարապետները Բյուզանդիայում մեծ համարում ունեին: Այսպես, հռչակավոր Տրդատին վստահվեց Կոստանդնուպոլսի՝ 989թ. երկրաշարժից վնասված մայր տաճարի՝ Սբ Սովիայի գմբեթի վերականգնումը [ավելի մանրա-

մասն տե՛ս 14, pp. 55 sqq.; 16, part I, pp. 615-616; 17]: Բյուզանդիայի որդեգրած հայկական ճարտարապետական ձևերը, շնորհիվ կայսրության մշակութային կապերի, ոչ միայն տարածվել են Եվրոպայի ուղղափառ երկրներում, այլև ազդել են միջնադարի արևմտաեվրոպական շինարարական արվեստի վրա [14, pp. 55-57, 73, 76; 16, part II, pp. 369-371; 4, c. 519]:

Հատկանշական է, որ հայկական արվեստի ակտիվ ազդեցությունը բյուզանդականի վրա (IX-XIդդ.) ժամանակագրականորեն համընկնում է մի կողմից Բագրատունյաց Հայաստանում մշակույթի բուռն վերելքի, մյուս կողմից՝ Բյուզանդիայում այսպես կոչված «Մակեդոնական վերածննդի» հետ (հայկական ծագման կայսերական հարստության անվամբ): Ընդ որում՝ փոխադարձ առնչություններում Հայաստանը ծառայում էր որպես կամուրջ՝ արևելյան արվեստի ձեռքբերումները (հատկապես դեկորատիվ արվեստը) Բյուզանդիային փոխանցելիս՝ նախապես դրանք ենթարկելով վերամշակումների: Իր հերթին, Բյուզանդիան նույնպիսի կամուրջ էր հանդիսանում հայկական արժեքները (հատկապես ճարտարապետության բնագավառում) Եվրոպային փոխանցելու գործում:

Հարկ է նշել, որ հայկական (իսկ դրանց միջոցով՝ մերձավորարևելյան) մշակութային արժեքների տարածումը կամ ազդեցությունը Բյուզանդիայում զգալի չափով պայմանավորված էր այնտեղ հայազգի կայսրերի, պետական գործիչների գործունեությամբ և, գլխավորը, սովոր հայ բնակչության առկայությամբ, որի մեջ, բնականաբար, կային արվեստագետներ ու հմուտ վարպետներ: Վերջիններս ապրում ու ստեղծագործում էին ոչ միայն Փոքր Ասիայի հայաշատ ու կայսրության հայկական շրջաններում, այլև Կոստանդնուպոլսում ու հարևան մարզերում (Թրակիա, Մակեդոնիա՝ մասնակից դառնալով մայրաքաղաքում արվեստի բյուրեղացմանն ու տարածմանը: Այսինքն՝ հայերը ոչ միայն ազդում էին բյուզանդական քաղաքակրթության զարգացման վրա որպես հարևաններ, այլև դրան անմիջականորեն մասնակցում էին «ներսից»:

III

Դեռ անտիկ ժամանակներից կայսրության տարածքում ապրող հայերի թիվը սովորաբար միջին դարերում, երբ Հայաստանը կամ նրա մեծ մասը հայտնվեց նախ պարսկական (V-VIդդ.), ապա՝ արաբական (VII-VIIIդդ.) տիրապետության տակ և դարձավ հարևան տերությունների միջև պատերազմների կռվախնձոր ու թատերաբեմ: Առաջին հերթին, Բյուզանդիա էին գաղթում օտար լծին ընդդիմացող հայ նախարարության ներկայացուցիչները, որոնք ընդունելության էին արժանանում կայսրությունում, ձեռք բերում նոր կալվածքներ (հիմնականում արևելյան ու բալկանյան սահմանային շրջան-

ներում), ներգրավվում էին պետական ծառայության մեջ, սեփական կամ իրենց վստահված զինված ուժերով մասնակցում Բյուզանդիայի պատերազմներին (ընդդեմ պարսիկների, արաբների, գերմանական ու թյուրքական ցեղերի, սլավոնների) և պաշտպանում պետության սահմանները: Վաղ շրջանի Բյուզանդիայում ներկայացված էին այնպիսի ազնվականական տներ, ինչպիսիք էին Արշակունիները, Բագրատունիները, Մամիկոնյանները, Կամսարականները, Խորխոռունիները, Գնունիները, Ամատունիները, Անձևացիները և այլն [18, էջ 380-381]: Հատկապես VII-VIII դարերում կայսրություն էր գաղթում նաև զգալի թվով հասարակ հայ բնակչություն (այդ թվում քաղկեդոնականներ ու պավլիկյաններ): Բացի ներգաղթյալներից, կայսերահպատակ հայեր, բնականաբար, բնակվում էին Բյուզանդիայի կազմում ընդգրկված բուն հայկական հողերում (Փոքր Հայք, Մեծ Հայքի արևմտյան գավառներ): Ընդ որում՝ ժամանակ առ ժամանակ այդ հողերի աշխարհագրությունը մեծանում էր, ինչպես VIդ. վերջին կամ XI դարում, երբ Հայաստանի մեծ մասը հայտնվեց բյուզանդական տիրապետության տակ:

Բյուզանդական իշխանությունները ոչ միայն խրախուսում էին հայերի ներգաղթը, այլև հաճախ (սկսած VIդ. երկրորդ կեսից) իրականացնում էին բռնի գաղթեցումներ: Եվ դա ուներ իր ծանրակշիռ պատճառները: Հուստինիանոս Ա կայսեր (527-565թթ.) փայլուն ժամանակաշրջանին հաջորդեց Բյուզանդիայի համար ծանր անցումային մի շրջան, որը տևեց մինչև VIII դարը ներառյալ: Ահագնացած հասարակական ճգնաժամը, ներքին ու արտաքին փոթորիկները (VIIդ. սկզբի դաժան քաղաքացիական պատերազմ, անընդհատ ներքաղաքական խլրտումներ, VI-VIIդդ. ավերիչ բարբարոսական ներխուժումներ, պարսիկների ու արաբների դեմ ծանր պատերազմներ) հանգեցրին տնտեսական քայքայմանը, նախկինում տիրապետող սոցիալական խավերի (սենատորական խոշոր հողատիրական դասի, մունիցիպալ կամ կուրիալական՝ միջին հողատիրական դասի) մեծ մասի ոչնչացմանը, կայսրության հսկայական (մինչև 2/3) տարածքային կորուստներին, սեփական սահմաններում անհնազանդ սլավոնական բնակչության հաստատմանը, տեղերում կենտրոնական իշխանության դիրքերի և կայսրության տարբեր հատվածների միջև կապերի թուլացմանը: Հաճախ տարրական գոյության համար պայքար մղելու հարկադրված կայսրությունը սուր կարիք ուներ կռվող ու աշխատավոր ուժերի, պետական ու ռազմական կադրերի, ուսյալ մարդկանց [4, cc. 12-18; 19, c. 61]:

Հայաստանն ու հայությունը Բյուզանդիայի համար հանդիսանում էին այդ բացը զգալիորեն լրացնելու հրաշալի աղբյուր: Հայկական զինվորակաությունը, որի հմտություններին Հռոմեական կայսրությունում ծանոթ էին

դեռ III դարում¹, արդեն Մավրիկիոս կայսեր (Մորիկ, 582-602թթ.) բանակում ամենախոշոր օտար տարրն էր և խաղում էր մեծ դեր [20, pp. 17-18]: Հետագա դարերում այդ դերը միայն աճել է: Դա կապված էր ոչ միայն շարունակ նվազող բյուզանդական բանակում ծառայության մեջ գտնվող հայ ռազմիկների թվական աճի հետ²: Հայությունը շահեկանորեն տարբերվում էր մի կողմից IV-VIIդդ. ընթացքում մարտունակության զգալի անկում ապրած բուն բյուզանդական (ուշ հռոմեական) հասարակությունից, մյուս կողմից՝ ռազմաշունչ, բայց կազմակերպական ցածր մակարդակի վրա գտնվող բարբարոսներից: Եվ դա՝ շնորհիվ դարավոր հասարակական-քաղաքական ու ռազմական ավանդույթներ ունեցող նախարարության, որը հայոց ռազմական կառույցը գլխավորող այրուձիու սոցիալական հիմքն էր: Այս հաստատության առկայությունը հայերին թույլ տվեց ոչ միայն աչքի ընկնել Բյուզանդիայի պատերազմող բանակների շարքերում, այլև արագորեն ձեռք բերել սեփական թվին ոչ համարժեք բարձր ու ազդեցիկ դիրքեր: Արդեն Մավրիկիոս կայսրը տեգին վարժ տիրապետող ու ծանրազեն հայ հեծյալներին օգտագործում էր որպես Թրակիայում ավարների դեմ կռվող իր զորքերի գլխավոր հարվածային ուժը: Պարսիկների դեմ երկարատև ու դժվարին պատերազմում (հատկապես 620-ական թթ. հակահարձակման ժամանակ) Հերակլ Ա կայսրը (610-641թթ.) առաջին հերթին հենվում էր հայկական ուժերի վրա: Պարսիկների ու արաբների դեմ դարավոր պայքարում ռազմավարական խիստ կարևոր նշանակություն ուներ այդ կայսեր կողմից Արմենիկների թեմի հիմնադրումը (622-ից առաջ) կայսրության արևելյան սահմանային, մեծավ մասամբ հայաբնակ շրջաններում (Փոքր Հայք, Բարձր Հայք, Պոնտոս, Կապադովկիայի մի մասը)³: Հիմնականում հայկական ուժերի կողմից վերահսկվող այդ թեմը VII-IX դարերում իր ներուժով ու կարևորությամբ երկրորդն էր կայսրությունում (հարավ-արևմուտքից իրեն հարող Անատոլիկների թեմից հետո), ծառայում էր իբրև արևելքում կայսրության ընդհանուր պաշտպանական համակարգի ու հակառակորդների դեմ հակահարձակումների գլխավոր հենակետը: Բյուզանդիայի ռազմաքաղաքական կյանքում ավելի քան հարյուր հայ զորավարներ խաղացել են անգնահատելի

¹ Այդ դարում հայ աղեղնավոր հեծյալները մասնակցում էին Հռոմի պատերազմներին գերմանական բարբարոսների դեմ և համարվում էին ամենամարտունակ ուժերից մեկը [21]: V դարում (մինչև 488թ.) հայերին էր վստահվում կայսերական պալատի անվտանգությունը պահպանող զվարդիայի պարտականությունը [22, էջ 114]: Մեծ հռչակ էին վայելում Հուստինիանոսի բանակի հայ զորավարները (առաջին հերթին՝ հանճարեղ Նարսեսը), որոնց թիվը հասնում էր 17-ի [20, p. 16]:

² Արաբական ու բյուզանդական աղբյուրների համաձայն՝ VIIIդ. երկրորդ կեսին բյուզանդական բանակը հաշվվում էր 80-90 հազ., որի մեջ հայկական տարրը կազմում էր, կոպիտ հաշվարկներով, մոտ 25% [23, էջ 533; 20, pp. 20-21; 24]:

³ Թեմերի մասին տե՛ս ստորև:

դեր: Թերևս, ավելորդ է հաջորդաբար թվարկել նրանց անուններն ու կայսրությանը մատուցած մեծ ծառայությունները [այդ մասին տե՛ս 20; 25; 26]: Բավական է նշել, որ նրանց վստահվում էին կարևորագույն ռազմական պաշտոններ՝ սքոլերի դոմեստիկոս¹, կայսերական պահակագործի, թեմերի (հատկապես փոքրասիական՝ Արմենիակների, Անատոլիկների, Թրակեսիացիների, Բուկկելարների, Օփսիկիացիների և այլն), խոշոր (առաջին հերթին՝ գլխավոր ճակատում գործող արևելյան) զորամիավորումների, կայսերական նավատորմի, վարձկանների ուժերի հրամանատարներ: Բյուզանդիան իր հայազգի զորավարներին և ընդհանրապես հայ զինվորականությանը մեծապես պարտական էր՝ սկզբնական շրջանում (VI դ. երկրորդ կեսից սկսած) հարևանների հարձակումներից պաշտպանվելու, կայսրության տարածքում կենտրոնական իշխանության հեղինակությունն ամրապնդելու, հարևան շրջաններից հայ և այլ բնակչությանը կայսրության սահմաններում վերաբնակեցնելու, այնուհետև (IX-X դդ.)՝ թշնամիների դեմ պայքարում բեկում մտցնելու և, վերջապես, բոլոր ճակատներում հակահարձակման ու նոր ծավալման անցնելու գործում:

Բանակում զբաղեցրած դիրքերը հայերին վստահություն էին ներշնչում սեփական ուժերի նկատմամբ: Հատկապես մեծ հեղինակություն ունեին նրանք թեմերում, ուր արդեն VIII դարում մեծավ մասամբ իրենց ձեռքում էին կենտրոնացրել տեղական զորքերի հրամանատարությունը: Հենվելով վերջիններիս վրա՝ հայ զորավարները ներգրավվում էին նաև մայրաքաղաքում քաղաքական խմբավորումների միջև ընթացող պայքարին, երբեմն գլխավորում դրանք, մասնակցում էին խռովությունների կամ իրենք բարձրացնում, վերջապես, իրենք էին հավակնում քաղաքական ամենաբարձր դիրքերի՝ ընդհուպ մինչև կայսերական գահը: Ըստ երևույթին, հայկական ծագում ուներ փոքրասիական կալվածատերերի ներկայացուցիչ ու զորավար Հերակլը [20, ր. 18]: Նրա հիմնադրած հարստությունը կարճատև ընդհատմամբ իշխել է մինչև 711թ.²: Հայազգի կայսրեր էին Փիլիպպիկոս-Վարդանը (711-713թթ.) և Լևոն Ե Արժրունին (813-820թթ.), որոնք մինչև գահ բարձրանալը եղել են զինվորականներ: Արդեն Հերակլից սկսած մինչև IX դ. սկիզբը բյուզանդական կայսրերի մեծ մասն ուներ հայազգի մրցակիցներ, որպիսիք էին զորավարներ Վահանը (635թ.), Վալենտինոս Արշակունին (արևելյան զորախմբի հրամանատար, 640-ական թթ.), Մժեժ Գնունին (668թ.) ու նրա որդի

¹ Այդպես էին կոչվում մայրաքաղաքում տեղակայված չորս հեծյալ ստորաբաժանումների հրամանատարները, IX դ. կեսից՝ կայսրության բոլոր զինված ուժերի ընդհանուր հրամանատարը: X դարում այս վերջին պաշտոնը երկատվեց Արևելքի դոմեստիկոսի և Արևմուտքի դոմեստիկոսի պաշտոնների:

² Այդ հարստության կայսրերն էին՝ Հերակլ Ա (610-641թթ.), նրա որդիներ Կոստանդին Գ և Հերակլ Բ (641թ.), Կոստանդին Գ-ի որդի Կոստաս Բ (641-668թթ.), նրա որդի Կոստանդին Դ (668-685թթ.), նրա որդի Հուստինիանոս Բ (685-695 և 705-711թթ.):

Հովհաննեսը (Կոստանդին Դ-ի օրոք), Արտավազը (742-743թթ.), Վարդանը («Թուրք» մականվամբ, Անատոլիկների թեմի հրամանատար, 802թ.), Արշավիրը (Արսաբեր, 808թ.) և այլն: Նրանց մեջ հատկապես նշանավոր էր Արտավազը՝ Լևոն Գ Բսավրացի կայսեր (717-741թթ.) փեսան, որը, ժամանակին լինելով Արմենիակների թեմի հրամանատար, աջակցել էր այդ կայսեր գահ բարձրանալուն: Տիրանալով Կոստանդնուպոլսի գահին արդեն որպես Օփսիկիացիների ղեկավար՝ նա հենվում էր իր ազգականների, հայ պալատականների, ինչպես նաև Արմենիակների զորքի վրա, որի հրամանատար էր կարգել իր որդիներից մեկին [20, p. 22; 25, p. 107]¹:

Հայ զորավարներն առավել շատ են աչքի ընկել Մակեդոնական (Հայկական) հարստության օրոք՝ IXդ. վերջին-XI դարում, երբ Բյուզանդիան ապրում էր աննախընթաց վերելքի և տարածքային ընդլայնման շրջան: Գլխավոր ճակատը շարունակում էր մնալ արևելյանը, որտեղ պավլիկյան ուժերի կատարյալ ջախջախման (872թ.) և Արաբական խալիֆայության թուլացման արդյունքում Բյուզանդիայի համար հնարավորություն ստեղծվեց վերահաստատելու սեփական գերիշխանությունը: Եվ այստեղ գլխավոր դերում հայերն էին. Մլեհ, Հովհաննես Կուրկուաս (որի նշանակումը 923թ. Արևելքի դոմեստիկոս նշանավորեց Բյուզանդիայի՝ դեպի արևելք վճռական գրոհի սկիզբը) և նրա եղբայր Թեոփիլոս, Վարդաս Փոկաս (Xդ. կեսին), Արևելքի դոմեստիկոսներ և ապա՝ զորավար-կայսեր Նիկեփորոս Բ Փոկաս (963-969թթ.) և Հովհաննես Ա Չմշկիկ (969-976թթ., Թեոփիլոս Կուրկուասի թոռը), վերջիններիս հրամանատարության տակ գործող Լևոն Փոկաս (Նիկեփորոսի եղբայրը), Միքայել Բուրցես, Արևելքի դոմեստիկոսներ Մլեհ (վերոհիշյալ Մլեհի որդին), Վարդաս Սկլերոս, Բարսեղ Բ-ի օրոք՝ Վարդաս Փոկաս և այլն: Եվրոպական ճակատներում (ուր կայսրության գլխավոր հակառակորդը Բուլղարիան էր) իրենց դրսևորեցին Նիկեփորոս Փոկասը (IXդ. վերջին) և նրա նույնանուն թոռ կայսրը, ավագ Մլեհը, Նիկետաս Սկլերոսը (Xդ., բուլղարների դեմ պայքարում աչքի ընկավ նաև իբրև շնորհալի ռազմական դիվանագետ), կայսրեր Հովհաննես Չմշկիկն ու Բարսեղ Բ-ը, վերջինիս օրոք՝ Գրիգոր Տարոնացին, Թեոդորականը: Ծովի վրա X դարում աչքի ընկան ապագա կայսր Ռոմանոս Լակապենոսը (Մամոսի ծովային թեմի, ապա՝ կայսերական նավատորմի ի հրամանատար), Ալեքսիոս Մուսելեն (կայսերական նավատորմի ի հրամանատար): Մեծ թվով տաղանդավոր հայ զորահրամանատարներ հանդես եկան նաև XI դարում:

Հայ զորավարների հրամանատարության տակ կայսերական բանակների տարած հաղթանակների արդյունքում (մինչև XIդ. առաջին կեսը) արաբներից հետ գրավվեցին մեծ տարածքներ (Անատոլիայի հարավ-

¹ Գահին հավակնելու մեջ մեղադրվել է նաև Արմենիակների թեմի հրամանատար Ալեքսիոս Մուսելեն (792թ.):

արևելքը, Ասորիքի և Միջագետքի հյուսիս-արևմուտքը, Կրետեն ու Կիպրոսը), նվաճվեց Բուրղարիան, Բյուզանդիայի գերիշխանությունն ընդունեցին մյուս բալկանյան և Մերձավոր Արևելքի քրիստոնեական պետությունները, հետ մղվեցին ռուսների և այլոց գրոհները: Բյուզանդիան վերահաստատեց ծովերի տիրուհու իր կարգավիճակը:

Եվ բյուզանդացիներն ըստ արժանվույն գնահատում էին իրենց հայազգի զորավարներին: Նոր Աթիլլես էր համարվում կայսրության առաջին զինվորական դեմք Մանվել Մամիկոնյանը, որը փայլուն կարիերա էր ստեղծել Միքայել Ա, Լևոն Ե, Միքայել Բ և Թեոփիլոս կայսրերի (811-842թթ.) ժամանակ՝ լինելով Արմենիակների հրամանատար և սքոլերի դոմեստիկոս: Կիլիկյան Տավրոսից հյուսիս իր իսկ հիմնադրած Լյուկանդոս թեմի հրամանատար (914-934թթ.) Մլեհ ավագը, ինչպես ենթադրվում է, իր քաջագործությունների շնորհիվ դարձավ բյուզանդական «Դիգենիա Ակրիտաս» էպոսի գլխավոր հերոսի նախատիպը [20, p. 44; 14, p. 23; 25, pp. 21 sqq.]: Քսան տարուց ավելի (923-944թթ.) Արևելքի զորքերը ղեկավարած և գրեթե միշտ հաղթանակներ տարած Հովհաննես Կուրկուասը ճանաչվեց իր ժամանակի Տրայանոս կամ Բելիսարիոս¹: Բյուզանդական պատմագրության մեջ հատկապես մեծ արձագանք գտավ Մ. Երկրորդ կեսի ժամանակաշրջանը, երբ հայ կայսրերի ու զորավարների ջանքերով բյուզանդական զենքը տարավ փայլուն հաղթանակներ: Իր պատմական աշխատությունն այդ շրջանի անցքերին նվիրած հույն պատմագիր Լևոն Երեցը գլխավոր հերոս է դարձրել արաբների դեմ պատերազմներում փառավորված Նիկեփորոս Բ-ին, որին կոչում էին «սարակենոսների գունատ մահ»: Կայսրին պատմիչը համեմատում էր Հերակլեսի հետ, իսկ նկարագրվող ժամանակը՝ հին հույների հերոսական անցյալի հետ [4, c. 145]: Հույների վրա հայերի թողած տպավորության մասին է վկայում «Թեոփյուլակտոսի մասին ասքը», որում գովերգված են Ռոմանոս Ա կայսեր հոր՝ անփոխարինելի զորավար ու դիվանագետ, հայազգի Թեոփյուլակտոս Աբաստակտոսի սխրանքները: Բյուզանդացիների հիշողության մեջ վառ մնաց 863թ. Մելիտենեի ճակատամարտում արաբների դեմ զորավար Պետրոնաս Մամիկոնյանի տարած պատմական հաղթանակը: Այդ ճակատամարտի հետ կապված իրադարձություններն էլ ընկան բյուզանդական մեկ այլ էպիկական երկի՝ «Արմուրիսի որդու մասին երգի» հիմքում [4, c. 147]: Բարձր էր գնահատվում հայ զինվորն ընդհանրապես: Հիբրավի, «հայ» և «քաջ» հասկացությունները Բյուզանդիայում հոմանիշներ էին, իսկ հայկական զորամիավորումները բյուզանդական բանակի մեջ լավագույնների համարում ունեին [27, c. 141; 14, pp. 21-23]:

¹ Հռոմեական կայսր Տրայանոսը (98-117թթ.) իր ժամանակի լավագույն զորավարներից մեկի համարումն ուներ: Նույն հռչակն էր վայելում Վիդ. բյուզանդական զորավար Բելիսարիոսը:

Աստիճանաբար ամրապնդվում էին հայերի դիրքերը նաև մայրաքաղաք Կոստանդնուպոլսում, կայսրության վարչաքաղաքական ասպարեզում: Դեռ V դարից կայսրությունում ապաստանած հայ ազնվականներին (մասնավորապես Արշակունիներին, Մամիկոնյաններին) երբեմն վստահվում էին բարձր պաշտոններ (օրինակ, քաղաքական մեծ նշանակություն ունեցող սենեկապետի պաշտոնը, որը կայսեր վստահված անձն էր): Ամորիական հարստության (820-867թթ.) օրոք Մամիկոնյաններին նույնիսկ հաջողվեց հասնել քաղաքական իշխանության: Նախարարական այդ տոհմին էր պատկանում հարստության հիմնադիր Միքայել Բ-ի որդու՝ Թեոփիլոս կայսեր (829-842թթ.) կինը՝ Թեոդորան: Վերջինս իրականացնում էր անչափահաս որդու՝ Միքայել Գ-ի (842-867թթ.) խնամակալությունը: 856-866թթ. կենտրոնական իշխանությունը Բյուզանդիայում պատկանում էր Թեոդորայի եղբորը՝ Վարդաս Մամիկոնյանին: Բոլոր կարևոր քաղաքական պաշտոնները կենտրոնացել էին նրա ազգականների ու մերձավորների ձեռքում: Ռազմական ուժերի ընդհանուր ղեկավարությունն էլ ստանձնել էր վերոհիշյալ Պետրոնասը՝ Թեոդորայի ու Վարդասի եղբայրը:

Ամորիական հարստության օրոք հայերը հասան նաև Կոստանդնուպոլսի պատրիարքի աթոռին. 837-842թթ. այն զբաղեցրել է Հովհան Քերականը, 858-867թթ.՝ Թեոդորայի ու Վարդասի բարեկամ Փոտը¹:

Նիկողայոս Ադոնցի դիտողությամբ՝ Մամիկոնյանները շատ մոտ էին կանգնած սեփական հարստության հիմնադրմանը Բյուզանդիայում, ինչին խանգարեց 866-867թթ. պետական հեղաշրջումը [25, p. 106]: Ուշագրավը, սակայն, այն է, որ հեղաշրջումն իրականացրին մի խումբ հենց հայազգի գործիչներ՝ Բարսեղի գլխավորությամբ: Դա վկայում է կայսրությունում հայերի քաղաքական մեծ կշռի մասին [20, p. 27]: Բարսեղը հիմնադրեց այսպես կոչված Մակեդոնական (Հայկական) հարստությունը (867-1056թթ.)², որի կառավարման հետ է կապված Բյուզանդիայի պատմության ամենափառավոր շրջանը: Եվ հատկանշական է, որ այդ հարստության օրոք կայս-

¹ Ավելի ուշ հայազգի պատրիարքներ են եղել Լևոն Զ կայսեր եղբայր Ստեփանոսը (886-893թթ.) և Ռոմանոս Ա-ի որդի Թեոփիլոպոսոսը (925-956թթ.): Իհարկե, հայերի դերը բյուզանդական եկեղեցում այսքանով չի սահմանափակվել: Տարբեր դարերում եղել են հոգևոր տարբեր աստիճաններ ունեցող հայազգի գործիչներ, որոնք հիմնադրում կամ առաջնորդում էին վանքեր, ստանձնում քաղաքական նշանակության առաքելություններ: Ի մասնավորի, Բյուզանդիան նրանց է պարտական Աթոսի սուրբ լեռան վրա վանական կազմակերպության ձևավորման համար (վերն առիթ էղավ հիշատակելու Աթանասիոսին): Այդ կազմակերպությունը ստեղծվել է հայազգի կայսր Նիկեփորոս Բ-ի հովանավորմամբ: 971թ. էլ հայ Հովհաննես Ա կայսրը կազմել է եղբայրության առաջին կանոնադրությունը [28, էջ 321]:

² Այդ հարստության անմիջական ներկայացուցիչներն էին՝ Բարսեղ Ա (867-886թթ.), նրա որդիներ Լևոն Զ (886-912թթ.) և Ալեքսանդր (912-913թթ.), Լևոն Զ-ի որդի Կոստանդին Է (913-959թթ.), նրա որդի Ռոմանոս Բ (959-963թթ.), նրա որդիներ Բարսեղ Բ (976-1025թթ.) և Կոստանդին Ը (1025-1028թթ.), վերջինիս դստեր Զոնե (1042թ.) և Թեոդորա (1042, 1055-1056թթ.): Բացի այդ, հարստության մեջ են ընդգրկվում՝ Կոստանդին Է-ի աներ և զահակից, ծագումով հայ Ռոմանոս Ա Լակապենոսը (919-944թթ.), Ռոմանոս Բ-ի կնոջ երկրորդ ամուսին, հայազգի Նիկեփորոս Բ Փոկասը (963-969թթ.), Կոստանդին Է-ի փեսա, նույնպես հայազգի Հովհաննես Ա Զմշկիկը (969-976թթ.), ինչպես նաև Զոնեի ամուսիններ Ռոմանոս Գ Արգյուրոսը (1028-1034թթ.), Միքայել Դ Պափլագոնացին (1034-1041թթ.) և Կոստանդին Թ Մոնոմարոսը (1042-1055թթ.):

րության ոչ միայն ռազմական, այլև քաղաքական գլխավոր դեմքերը գերազանցապես հայեր էին [20, p. 34; 25, pp. 21, 108]:

Իշխանության գալուց որոշ ժամանակ հետո Բարսեղ Ա-ն իրեն շրջապատեց հայազգի գործիչներով: Դրանց թվում էին Կոստանդնուպոլսի քաղաքապետ (էպարքոս) Մարիանոսը՝ Պետրոնաս Մամիկոնյանի որդին, զինված ուժերի գլխավոր հրամանատար Նիկեփորոս Փոկասը և քաղաքացիական վարչակազմի փաստացի ղեկավար Սոյուլիանոս Զաուցեսը: Իր մահվանից առաջ կայսրը վերջինիս վստահեց բոլոր քաղաքական ու եկեղեցական գործերի ընդհանուր վերահսկումը: Մինչև իր մահը (896թ.) Սոյուլիանոսը կայսրության ամենաազդեցիկ դեմքն էր և հաջողացրել էր իր դստերը կնության տալ Լևոն Զ կայսրին:

Անչափահաս Կոստանդին Է Ծիրանածնի գահ բարձրանալուց (913թ.) հետո իշխանության համար պայքար սկսեցին մի քանի խմբավորումներ: Դրանցից երկուսը գլխավորում էին հայազգիներ՝ ծովակալ Ռոմանոս Լակապենոսը և գորավար Լևոն Փոկասը (Նիկեփորոսի որդին): Եվս մեկը ղեկավարում էր գլխավոր գորահրամանատար Կոստանդին Դուկասը (913թ. դավադրության կազմակերպիչը), որին սատարում էին մեծ թվով հայեր: Դավադրության տապալումից հետո գորահրամանատարությունը հանձնվեց Լևոնին, ռազմածովային ուժերի ղեկավարումը՝ Ռոմանոսին: Պալատում գործում էր խնամակալական խորհուրդ, որի կազմում ընդգրկված էին ազդեցիկ հայեր, այդ թվում՝ դրոմոսի լոգոթետոս (կայսրության արտաքին գործերը տնօրինող) Թովմասը: Ի վերջո, գահի շուրջ ընթացող պայքարն ավարտվեց Ռոմանոսի հաղթանակով, որը դարձավ կայսեր գահակիցն ու երկրի իրական տերը: Նա նույնպես իր շուրջ հավաքեց հայ գորավարների ու վարչազետների, իր դստերն ամուսնացրեց Կոստանդին Է-ի հետ, երեք որդիներին դարձրեց գահակիցներ ու ենթադրյալ գահաժառանգներ, իսկ չորրորդ որդուն՝ պատրիարք, փաստորեն միավորելով աշխարհիկ ու եկեղեցական իշխանությունը [20, p. 36]: 944թ. Կոստանդին Ծիրանածինը հեղաշրջմամբ վերականգնեց սեփական իշխանությունը՝ կրկին հենվելով զգալի թվով հայերի վրա:

Կայսերական հարստությունից զատ, Մ. բյուզանդական պատմությունը ներկայացված էր բազմաթիվ ազդեցիկ հայկական տոհմերով, որոնք միանշանակորեն գերիշխում էին, առաջին հերթին, ռազմական ոլորտում՝ Փոկասներ, Կուրկուասներ, Սկլերոսներ, Մուսելեններ, Կրենիտեսներ, Կուրտիկիոսներ, Բուրցեսներ, Թոռնիկյաններ, Թեոդորականներ: Նրանց ազդեցիկության վկայությունը ոչ միայն մեծ թվով պատասխանատու (մեծավ մասամբ զինվորական) պաշտոնների զբաղեցումն էր, այլև այն հանգամանքը, որ միննույն տոհմի ներկայացուցիչները շարունակում էին պաշտոնավարել անկախ IX-X դարերում տեղի ունեցած տարբեր հեղաշրջումների հե-

տևանքներից: Վերոհիշյալ տոհմերից առաջին երկուսի ներկայացուցիչներին նույնիսկ հաջողվեց X դարում կարճ ժամանակով տիրանալ գահին: Դրանք էին Նիկեփորոս Բ Փոկասը և Հովհաննես Ա Կուրկուասը (Չմշկիկ), որոնք ամուսնացան, համապատասխանաբար, այրի թագուհու և արքայադստեր հետ: Իրենց կառավարման ժամանակի մեծ մասն արշավանքներում անցկացրած այդ զորավար-կայսերի օրոք և Բարսեղ Բ-ի (նույնպես տաղանդավոր զորավարի) գահակալման սկզբում (963-985թթ.) պետության քաղաքացիական վարչությունն ամբողջովին գտնվում էր ազգությամբ հայ, հեռատես և խորամանկ գործիչ Վասիլիոս Նոփոսի (Ռոմանոս Ա կայսեր ապօրինի որդու) ձեռքում:

XI դարը հայկական ընտանիքների քաղաքական հեղինակության վերջին դարն էր: Վերը նշվածների մեծ մասը դեռ շարունակում էր պահպանել բարձր դիրքեր, նշանավորվեցին նաև Ապոքապները, Բակուրյանները, Կեկավմենոսները, Դալասսենոսները և այլն: Առավել երկարակյաց գտնվեցին Տարոնի Բագրատունիներից սերող Տարոնիտեսներն ու Թոռնիկյանները: Նրանք կարևոր ռազմական, վարչական ու դատական պաշտոններ էին զբաղեցնում, համապատասխանաբար, մինչև XII դ. կեսը և XIV դ. սկիզբը:

IV

IX դարում Բյուզանդիայում սկիզբ առավ մշակութային վերելք, որն այլևս չընդհատվեց մինչև կայսրության անկումը XV դարում: Այդ վերելքի ակունքներում նույնպես հայեր էին կանգնած [20, p. 27]: Թերևս, Բյուզանդիայի ամենախոշոր հայազգի մշակութային գործիչը պատրիարք Փոտն էր (երկրորդ անգամ աթոռակալել է 877-886թթ.), որը հսկայական ջանքեր է թափել կայսրության գիտամշակութային վերածննդի համար: Լինելով անտիկ գրական ժառանգության փայլուն գիտակ՝ նա կայսրության պատմության մեջ ամենամեծ երողիտն էր և հիրավի հանրագիտարանային գիտելիքների տեր: Խելամիտ քաղաքական ու եկեղեցական գործիչ, առաջադեմ մտածող ու բժիշկ, գրականության նուրբ գնահատող ու օրհգինալ քննադատ, գեղարվեստական ճաշակի օրենսդիր՝ նա սկիզբ է դրել բյուզանդական նոր մտավոր՝ ռացիոնալիստական շարժմանը, որի հիմքում անհազ հետաքրքրությունն էր անտիկության նկատմամբ: Փոտին է պատկանում անտիկ և վաղ բյուզանդական շրջանի 280 ստեղծագործությունների հակիրճ շարադրությունն ու մեկնաբանությունը պարունակող «Մյուրիոբիբլիոն» («Բյուր գիրք») ժողովածուն: Բազմաթիվ անտիկ երկեր մեզ հայտնի են միայն Փոտի այդ աշխատանքի շնորհիվ: Նրա հետաքրքրությունների շրջանակը եղել է այն ժամանակվա համար աներևակայելիորեն մեծ. քերականություն, ճարտասանություն, պոեզիա, իմաստասիրություն, իրավունք, մաթեմատիկա, աշխարհագրություն, աստղագիտություն, կենսաբանու-

թյուն, ագրոնոմիա և այլն: Փոտը նաև շնորհառու մանկավարժ էր և իր շուրջ ստեղծել էր գիտնականների խմբակ: Նրան են աշակերտել սլավոնական լուսավորիչ եղբայրներ Կյուրեղը (իսկական անունը՝ Կոստանդին) և Մեթոդիոսը: Հունական գրի հիման վրա ստեղծելով սլավոնականը՝ նրանք պատրիարքի ու Վարդաս Մամիկոնյանի հանձնարարությամբ 863թ. Մոսկովիայում սկսել են ծավալել քրիստոնեական լուսավորչական գործունեություն: Փոտի աշակերտներն են եղել նաև Բարսեղ Ա կայսեր զավակները (այդ թվում ապագա կայսր Լևոն Զ-ը): Պատրիարքը համարձակ քաղաքական տեսաբան էր. իր «Ամփիլոքիոս» իմաստասիրական երկում նա առաջ է քաշել այն միտքը, որ պետական կառուցվածքը պայմանավորված է ոչ թե Աստծո, այլ մարդկանց կամքով՝ նրանց փորձին համապատասխան: Փոտին է պատկանում «երկու իշխանությունների» մասին տեսությունը, ըստ որի կայսեր ու պատրիարքի իշխանություններն իրավահավասար են ու փոխլրացնող [4, cc. 43-44, 71, 145, 303, 314, 319, 323, 383, 618; 10, c. 63]:

Փոտի ավագ ժամանակակիցն էր մեկ այլ պատրիարք՝ Հովհան Քերականը: Նա եղել է Լևոն Ե ու Միքայել Բ կայսրերի մտերիմն ու խորհրդականը, Թեոփիլոս կայսեր ուսուցիչը: Բազմակողմանի կրթություն ձեռք բերած այդ հմուտ քաղաքական գործիչն ու ճարտասան-վիճաբանը պատմության մեջ մտել է իբրև 815թ. պատկերամարտության¹ վերսկսման նախաձեռնողն ու գլխավոր գաղափարախոսը: Որպես իսկական աստվածաբան՝ նա նույնպես անտիկ իմաստնության քաջագիտակ էր և Թեոփիլոս կայսրին էր ներշնչել այն իմաստուն միտքը, որ պետության կառավարումը պետք է հենվի գիտության լույսի վրա: Պատկերապաշտության վերջնական հաղթանակից (842թ.) հետո Հովհանը պաշտոնաթող է եղել և նվիրվել գիտական գործունեությանը: Նրան է վերագրվում Բոսփորի ափին, եղբոր կալվածքում ստորգետնյա լաբորատորիայի ստեղծումը, ուր նա ինչ-որ գիտական փորձեր էր անցկացնում [4, c. 298; 29, էջ 513-515]:

Հայազգի գործիչները կրկին ինստիտուցիոնալացրել են բյուզանդական գիտությունը: Այս գործում առաջնային դերը պատկանում է Վարդաս Մամիկոնյանին, որը, լինելով լուսավորչական անձ, նյութապես ու բարոյապես աջակցում էր գիտնականներին: Վարդասի ջանքերով 843թ. ուսումնական կենտրոն հիմնվեց նախ մայրաքաղաքի Քառասուն մանկանց եկեղեցում: Ապա՝ 845թ. Մագնավրա կայսերական պալատում վերաբացվեց Կոստանդնուպոլսի համալսարանը², ուր դասավանդվում էին փիլիսոփայություն, քերական-

¹ Պատկերամարտության մասին տե՛ս ստորև:

² Վերջինս հիմնվել էր դեռ Թեոդոսիոս Բ կայսեր (408-450թթ.) կողմից 425թ.: VI-VII դարերում Բյուզանդիայի մյուս իմաստասիրական կենտրոնների փակման կամ անկման պայմաններում (պետության կրոնական քաղաքականության և արաբական նվաճումների հետևանքով) այն մնում էր կայսրությունում գիտության ու կրթության միակ նշանավոր կենտրոնը: Սակայն «մութ դարերում» (VII-VIIIդդ.) այդ հիմնարկն էլ գործնականում դադարեց գործել, իսկ լուսավորչության վերջին օջախները մնում էին վանքերն ու մասնավոր մարդկանց դպրոցներն իրենց սահմանափակ հնարավորություններով [29, էջ 501-502]:

նություն, երկրաչափություն, աստղագիտություն: Համալսարանի առաջին ղեկավարն ու դասախոսը Հովհաննեսի եղբորորդի և Վարդասի մտերիմ Լևոն Մաթեմատիկոսն էր (Լևոն Իմաստասեր): Համալսարանում նա կարողում էր փիլիսոփայություն՝ համեմված հին հունական գրականությամբ ու մաթեմատիկայով: Նրա աշակերտներն էլ դասավանդում էին մյուս առարկաները: Դասախոսությունների ոգին ազատամտությունն էր՝ ձերբազատված նախապաշարմունքներից: Անվանի գիտնականն իր գործունեությամբ աչքի էր ընկել դեռ Թեոփիլոս կայսեր օրոք, իսկ նրա փառքը հասել էր մինչև Բաղդադի խալիֆի պալատը: Այդ էնցիկլոպեդիստ գիտնականը զբաղվել է մաթեմատիկայով, բնագիտությամբ, աստղաբաշխությամբ, կիրառական մեխանիկայով, գրել է պիգրամներ՝ ցուցաբերելով անտիկ փիլիսոփայության խոր իմացություն: Որպես հմուտ ճարտարագետ նա արքունի պալատում պատրաստել է ջրի ճնշման տակ բարդ շարժումներ կատարող մետաղյա մեխանիկական կենդանիներ ու ծառեր, ինչպես նաև հատուկ կոճակով մինչև առաստաղը բարձրացող կայսերական գահ: Գիտնականի ստեղծած սարքերն օգտագործվում էին օտարերկրյա հյուրերի ու միապետների վրա տպավորություն թողնելու համար և հաճախ ունենում էին քաղաքական կարևոր նշանակություն: Լևոնը կատարել է նաև փարոսների օգնությամբ մեծ հեռավորությունների վրա գործող լուսային հեռագրի գյուտը, որն ուներ տեղեկատվական և ռազմական կարևոր նշանակություն: Լևոնին է պատկանում տառերը որպես մաթեմատիկական սիմվոլներ օգտագործելու գյուտը, որով, փաստորեն, սկիզբ է դրվել ժամանակակից հանրահաշվին: Գիտնականը գրել է նաև անտիկ մաթեմատիկոսների վերաբերյալ աշխատություններ՝ կարևոր դեր խաղալով նրանց գիտական ժառանգության պահպանման գործում [4, cc. 296, 299, 310, 317, 376, 394; 29, էջ 509-510, 522-532]:

Լևոնի աշակերտներից էր Մագնավրայում քերականություն դասավանդող Կոմիտաս Քերականը՝ մի շարք էպիգրամների հեղինակ և Հոմերոսի պոեմների մեկնաբան [4, c. 394; 29, էջ 510]:

Նույն դարում է գործել բյուզանդական մեկ այլ հայազգի մաթեմատիկոս՝ Բագարատ Սկիաստեսը:

Հայ Վասիլիոս Յալիմբանացուն (IXդ.) պատկանում է բյուզանդական եկեղեցական աշխարհագրության ամենանշանավոր երկերից մեկը՝ այսպես կոչված «Նոտիցիա թիվ 1»-ը, որում թվարկված ու նկարագրված են բյուզանդական եկեղեցական թեմերը: Երկը հանդիսանում է VI-VIIդդ. հեղինակների և իր՝ Վասիլիոսի հավաքած տեղեկությունների համադրություն, որը կարևոր տեղեկություններ է հաղորդում Միջերկրածովում վաղ միջնադարյան քրիստոնեական եկեղեցու տարածքային կառուցվածքի մասին [4, c. 350]:

Լուսավորության հանդեպ IXդ. հայազգի գործիչների վերսկսած պե-

տական հովանավորչական քաղաքականությունը թափ առավ հաջորդ՝ Մակեդոնական կամ Հայկական հարստության օրոք: Ի պատիվ ստորին խավերից սերած կիսագրագետ Բարսեղ Ա կայսեր՝ նա լավ հասկացավ գիտության դերը պետական կյանքում: Նրա որդին՝ Լևոն Զ Իմաստունը, և թոռը՝ Կոստանդին Է Ծիրանածինը, դարձան բյուզանդական մշակույթի այսպես կոչված «Մակեդոնական վերածննդի» կարկառուն դեմքերն ու մեկենասները:

Լևոն Իմաստունը համարվում է փիլիսոփա բյուզանդական գահի վրա: Նրան է պատկանում կայսրության պետական շենքի ամբողջացումը: Մասնավորապես, դա վերաբերում է նրա ծավալած ակտիվ օրենսդրական գործունեությանը («հին օրենքների մաքրման» կարգախոսով) և պալատական աստիճանակարգի համակարգմանը: Նրա բազմաժանր ստեղծագործության մեջ, օրենքներից (նովելներից) գատ, կարևոր նշանակություն ունի միջնադարյան ռազմական տեսությանը վերաբերող լավագույն ուսումնասիրություններից մեկը՝ «Տակտիկեն»: Վերջինս հիմնված է ոչ միայն անտիկ ու վաղ բյուզանդական տեսական մտքի, այլև կայսրին ժամանակակից գորավարների (առաջին հերթին Նիկեփորոս Փոկաս ավագի) ձեռք բերած հսկայական փորձի վրա: Այստեղ նկարագրված են կայսրության ռազմական կառուցվածքը, թեմական կարգերը, մարտավարությունը: Իր տեսական հիմնավորվածությամբ ու հարուստ բովանդակությամբ «Տակտիկեն» հանդիսանում էր բյուզանդական ռազմագիտական մտքի գագաթը [4, cc. 29, 73-76, 227, 277-291, 371; 30, cc. 43, 65, 275]:

Լևոն կայսրը հովանավորում էր իր օրերում վերածնվող բյուզանդական թատրոնը, որն արքունիքում ստացել էր կիսապաշտոնական բնույթ: Հայտնի է այդ կայսեր «առաջին դերասանը»՝ ոմն Վահան, որը ներկա էր գտնվում կայսեր ճաշկերույթներին և համարձակվում էր նրան խորհուրդներ տալ [19, c. 238]:

Կոստանդին կայսրն իրեն նվիրել է ամենատարբեր գիտական բնագավառների ուսումնասիրությանը: Նրա հանձնարարությամբ ու մասնակցությամբ պատրաստվել ու հրապարակվել են տարբեր ոլորտներին (իրավունք, լեզու, գյուղատնտեսություն, ռազմագիտություն, կենդանաբանություն, բժշկագիտություն, երաժշտություն և այլն) վերաբերող հանրագիտարանային աշխատություններ: Նրա անվան հետ է կապված նախորդ ժամանակաշրջանների հույն հեղինակներից քաղվածքներ պարունակող և 53 թեմատիկ բաժնից բաղկացած ճանաչողական-խրատատվական ժողովածուի կազմումը: Կոստանդինի գրչին են պատկանում մի ամբողջ շարք ուսումնասիրություններ՝ նվիրված պալատական տոնախմբություններին ու ընդունելություններին («Արարողությունների մասին»), կայսրության արտաքին քաղաքական խնդիրներին («Պետության կառավարման մասին»),

Բյուզանդիայի ժամանակակից վարչական կազմակերպման պատմությանը («Թեմերի մասին»), հարստության հիմնադրի կյանքին («Բարսեղի կենսագրությունը»): Դրանցում ներկայացված են պատմական, աշխարհագրական, ազգագրական հույժ կարևոր տեղեկություններ Բյուզանդիայի և հարևան երկրների (այդ թվում Հայաստանի) վերաբերյալ: Լևոն և Կոստանդին կայսրերին են վերագրվում նաև երաժշտական ստեղծագործություններ [4, cc. 95-98, 347-349, 371, 560]:

X դարում է գործել վերոհիշյալ Թովմասի որդին՝ պատմագիր Հովսեփոս Գենեսիոսը [20, p. 25]: Կոստանդին Ծիրանածնի պատվերով նա գրել է «Թագավորությունների գիրքը», որն ընդգրկում է Բյուզանդիայի պատմությունը Լևոն Ե-ից մինչև Բարսեղ Ա կայսեր կառավարումը:

Նույն դարում ստեղծվել է Նիկեփորոս Բ Փոկաս կայսրին վերագրվող ռազմագիտական մի տրակտատ, որը Արևելքում արաբների դեմ պատերազմ մղելու պրակտիկ ձեռնարկ է: Այն պարունակում է հույժ արժեքավոր վկայություններ կայսրության ռազմական պատմության այդ վճռական շրջանում բյուզանդական բանակում տեղի ունեցած շրջադարձային փոփոխությունների մասին [30, c. 48]:

Հույն ուսումնասիրողներից մեկի դիտարկմամբ՝ միջնադարյան հունական գրականության մեջ քաղաքական հնչողություն ունեցող ամենաօրիգինալ տրակտատը շնորհալի գորավար ու նահանգապետ, խորաթափանց մտածող, հայազգի Կեկավմենոսի «Խրատներն» են՝ գրված 1070-ական թթ.: Այդ երկը ժամանակի բյուզանդական իրականության (կենցաղ, սոցիալական հարաբերություններ, քաղաքական կյանք) ամենատարբեր նրբությունները հրաշալի ու ամբողջական ձևով արտացոլող մի հայելի է: Հեղինակի հարուստ փորձի հիման վրա գրված «Խրատները» հասցեագրված են սեփական զավակներին: Նրանց մեջ Կեկավմենոսը ցանկանում է տեսնել աստվածավախ ու ջանասեր, ռացիոնալ ու հաշվենկատ, չափավոր ու զգուշավոր մարդկանց, որոնք չպետք է կորչեն բյուզանդացու՝ վտանգներով ու խարդախություններով լի կյանքում: Երկն ունի նաև պատմական արժեք՝ անդրադառնալով X-XIդդ. բյուզանդական իրադարձություններին [20, p. 47; 4, cc. 161-168]:

«Կոմնենոսյան վերածննդի» բյուզանդական մշակույթը (XIդ. վերջ-XIIդ.) ներկայացված է սակավաթիվ հայ գործիչներով: Այդ շրջանի բյուզանդական գրականության ներկայացուցիչներ են եղել XIIդ. հայազգի գրողներ Գեորգիոս, Դիմիտրիոս և Եվթյումիոս Թոռնիկյանները: Նրանցից առաջինն արքայադուստր Աննա Կոմնենեի ինտելեկտուալ խմբակից էր, երկրորդն էլ զբաղեցրել է մինիստրական (լոգոթետոսի) պաշտոն: Գրող և աստվածաբան էր Նիկեփորոս Վասիլակիսը (XIIդ. կես): Նույն դարի վերջին հոչակա-

վոր հույն գիտնական Նիկետաս Քոնիատեսի աշակերտն է եղել գրող Գեորգիոս Վարդանը (հետագայում՝ Կերկիրա կղզու միտրոպոլիտ):

XIV դարին է վերաբերում Լևոն Մաթեմատիկոսի գործի շարունակող Նիկողայոս Արտավազդի գիտական գործունեությունը: Նրա մաթեմատիկական ուսումնասիրությունները նվիրված են եղել հաշվողական արվեստին, տոմարին և երկրաչափությանը: Նրան է պատկանում քառակուսի արմատը մոտավոր եղանակով հանելու գյուտը [29, էջ 537]:

V

Արագ հայացք գցելուց հետո էլ ակնհայտ է այն մեծ տեղը, որ հայ գործիչները (կայսեր, զինվորականներ, պաշտոնյաներ, հոգևորականներ, մշակույթի գործիչներ) և առհասարակ բյուզանդահայերը դարեր շարունակ զբաղեցրել են Բյուզանդիայի կյանքում: Ադոնցը նրանց իրավամբ անվանում էր բյուզանդական շինության իսկական արհեստավորներ [25, ք. 9]: Արդյո՞ք դա հնարավորություն է տալիս այդ կայսրությունը կոչել «հունա-հայկական» պետություն: Այդ հարցին պատասխանելու համար պետք է պատկերացնել՝ ինչպիսի՞ն էին բյուզանդական քաղաքակրթությունը, առաջին հերթին՝ այդ քաղաքակրթության հիմքում ընկած հասարակական հարաբերությունների կառուցվածքը, վերջինիս հարաբերակցությունը հայկականի հետ և, վերջապես, դրանում բյուզանդահայերի իրական տեղը¹:

Ուսումնասիրողներից մեկի տված ամենաընդհանուր ձևակերպմամբ՝ բյուզանդականության էությունը կայանում էր երեք հիմնական բաղադրիչների օրգանական միասնության մեջ. հունականություն (հին հունական մշակույթի ժառանգություն), հռոմեականություն (հռոմեական պետաիրավական համակարգ) և քրիստոնեություն [3, ք. 22]: Թեև այսպիսի ձևակերպումը թույլ չի տալիս ամբողջապես պատկերացնել իրողությունը, սակայն օգնում է հասկանալ Բյուզանդիայի գլխավոր առանձնահատկությունը միջնադարյան մյուս երկրների (այդ թվում Հայաստանի) համեմատ՝ էտատիզմը կամ բարձր զարգացած պետականության առկայությունը: Կենտրոնացված պետական իշխանությունն իր քաղաքական ուսմունքով, մանրակրկիտ մշակված իրավունքով ու արդարադատությամբ հանդերձ, ժառանգություն էր մնացել ուշ Հռոմեական կայսրությունից: VI-VIII դարերում, երբ Բյուզանդիան քաղաքական ու տնտեսական մեծ տեղատվություններ էր ապրել, իսկ նոր սոցիալական ուժերը դեռևս կազմավորման ընթացքում էին, պետական մեքենան կարողացավ ընդհանուր առմամբ պահպանել իր կարգավորված ու արդյունավետ կառույցը [32, ք. 33-36]:

¹ Բյուզանդական հասարակական կառույցի ընդհանուր գծերի մասին տե՛ս 19; 10 (հատկապես ք. 35-102), 3, միջնադարյան հայկականի մասին տե՛ս [31] (հատկապես էջ 240 հջ.):

Դրանով էր պայմանավորված այն հսկայական դերը, որ պետությունն ու պաշտոնեությունն իրականացնում էին հասարակական կյանքում: Եթե միջնադարյան Հայաստանում կամ Արևմտյան Եվրոպայում ձևավորված ֆեոդալական հիերարխիան առաջին պլան էր մղում զինվորական-կալվածատիրական դասի մասնավոր իշխանությունը ենթակաների նկատմամբ, ապա Բյուզանդիայում իշխանության միակ օրինական ձև ճանաչվում էր հանրայինը, իշխանության միակ կրող՝ պետությունը: Ուստի իր դիրքը հասարակությունում կարող էր ապահովել սովորաբար միայն նա, ով հաղորդակից էր դառնում պետական իշխանությանը: Պետության և Օրենքի մարմնավորողն աստվածային կայսրն էր: Օժտված գրեթե անսահմանափակ իշխանությամբ՝ նա դիտարկվում էր իբրև Աստծո տեղակալը, քաղաքակիրթ աշխարհի (օյկումենեի) միակ իրական տիրակալը, ուղղափառ հավատքի և հռոմեական իրավունքի պաշտպանը:

Դոմինատի դարաշրջանում (III-IVդդ.) գաղափարապես հիմնավորված բյուզանդական բացարձակապետությունն ըստ էության հենվում էր անտիկ քաղաքացիական ավանդույթների ու արժեքների վրա. դրանք, ամրապնդվելով քրիստոնեական դեմոկրատիզմով, դարեր անց դրսևորում էին զարմանալի կենսունակություն: Ինքը՝ կայսրը, ոչ թե տերն էր հպատակների (որպիսիք տեսականորեն չկային), այլ առաջնորդն էր «քաղաքացիական համայնքի», որի կողմից «ընտրվում» էր և որի բարօրության համար պատասխանատու էր Աստծո և Նրա «ընտրյալ ժողովրդի» առաջ: Պետությունը հռչակվում էր *ἐννομος πολιτεία*՝ «քաղաքացիների իրավական կազմակերպություն», որտեղ հասարակական հարաբերությունները մեկնաբանվում էին ժողովրդավարական դարձվածաբանությամբ՝ բոլորի հավասարություն օրենքի առաջ և օրենքի գերակայություն: Պետական իշխանությունը մատչելի էր սկզբունքորեն բոլոր խավերին, և ճանաչվում էր յուրաքանչյուր «բարեպաշտ քաղաքացու» իրավունքը՝ դառնալու կայսր: Աստվածացվում էր ոչ թե կայսեր անձը, այլ նրա զբաղեցրած դիրքը: Համապատասխանաբար, հաստատագրված չէին իշխանության ժառանգականությունը և «թագավորող հարստություն» հասկացությունը:

Սակայն այս թվացյալ ժողովրդավարության հետևում թաքնված էր պետական ամբողջատիրությունը, որը հասարակության քաղաքական կյանքը դարձնում էր ձևական [10, c. 35]: Իրավական պետություն համարվող Բյուզանդիայում չկար կայսեր իշխանությունը սահմանափակող իրավական որևէ մարմին: Պետական շահերին էր ամբողջապես ծառայեցված տնտեսության կազմակերպումը: Այսպես, առևտրա-արհեստավորական կոլեգիաների գործունեության, ապրանքների արտադրության և իրացման ամբողջ ընթացքի նկատմամբ սահմանված էր պետական մանրակրկիտ

հսկողություն: Հայաստանում և Արևմտյան Եվրոպայում գլխավոր արտադրողը՝ գյուղացիական համայնքը, գտնվում էր ֆեոդալների (նախարարների) ու նրանց հիերարխիան գլխավորող միապետի մասնավոր իշխանության ներքո: Բյուզանդիայում, ընդհակառակը, գյուղերի մեծ մասը գտնվում էր պետության անմիջական տնօրինության տակ: Տարբեր գյուղեր կցված էին տարբեր պետական հիմնարկությունների և կոչված էին ծառայելու նրանց կարիքներին: Քրիստոնյա երկրների շարքում Բյուզանդիան առանձնանում էր նաև պետության ու եկեղեցու փոխհարաբերությամբ: Իդեալում պետության հետ ներդաշնակ գոյակցող եկեղեցին փաստորեն ենթարկված էր նրան: Այստեղ եկեղեցին զուրկ էր գրագիտության այն մենաշնորհից, տնտեսական այն ինքնուրույնությունից ու ապահարկությունից, պետական իշխանության այն բաժնից, որպիսիք ունեին եկեղեցիներն ուրիշ քրիստոնյա երկրներում, այդ թվում Հայաստանում: Եթե հայ իրականությունում եկեղեցին ժամանակի ընթացքում ենթարկվեց ֆեոդալականացման (նախարարականացման), ապա Բյուզանդիայում այն կազմակերպվեց կայսրության բյուրոկրատական կառուցվածքին համապատասխան:

Ընդհանուր առմամբ, պետական ամենատիրության արդյունքը տարբեր կազմակերպությունների (եկեղեցի, վանական եղբայրություններ, գյուղացիական համայնքներ, քաղաքային խորհուրդներ, արհեստավորական ու առևտրական կոլեգիաներ և այլն) փաստացի անպաշտպանությունն էր պետության առաջ, սոցիալական բոլոր խմբերի (բացի ընտանիքից) հեղհեղուկությունը, հասարակության հարաբերական ակորպորատիվիզմն ու հակահիերարխիզմը [10, cc. 47, 49]: Այս ամենը բոլորովին բնորոշ չէր զարգացած դասային կառուցվածք ունեցող Հայաստանին ու միջնադարի մյուս քրիստոնեական երկրներին: Բյուզանդական հասարակության առանձնահատկությունը հատկապես այցի է զարնում նրա ընտրանու պարագայում: Այստեղ մինչև XIդ. պաշտոնատար (քաղաքացիական ու զինվորական) անձինք էին կազմում սոցիալական տարասեռ ծագում ունեցող արիստոկրատիան: Ապադասայնացված Բյուզանդիայում վերջինս հանդես էր գալիս ոչ իբրև ժառանգական իրավունքներ ունեցող (առավել ևս՝ ներփակ) տոհմիկ դաս, այլ իբրև կայսեր շրջապատ, որի «դռները» բաց էին բոլոր շնորհալի մարդկանց առաջ [10, cc. 49-50, 89, 227; 19, c. 62]: Ազնվական ծագման գաղափարն այստեղ էական նշանակություն չունեցավ: Ուստի այդ շրջապատը մուտք գործած որևէ հայ իշխան պետք է հավասարը հավասարի վերաբերվեր, ասենք, բարձր դիրքի հասած գյուղացուն և առավել ևս հնազանդվեր նրան, եթե սա ձեռք էր բերում կայսերական գահը¹: Հայկական ու արևմտաեվրոպական

¹ Գյուղացիական ծագում ունեին, օրինակ, Մակեդոնական հարստության ներկայացուցիչներն ու Ռոմանոս Ա-ն:

Ֆեոդալական կուռ հիերարխիայի հիմքում դրված «պատվի» և «հավատարիմ ծառայության» սկզբունքներին անկայուն բյուզանդական արխատոկրատիան հակադրում էր եսապաշտությունն ու անհատապաշտությունը: Ի տարբերություն Հայաստանի կամ Եվրոպայի տոհմիկների, բյուզանդական ընտրանու տնտեսական հզորության հիմքը հողատիրությունը չէր, այլ պաշտոնի զբաղեցումը՝ դրանից բխող բոլոր չարաշահումներով հանդերձ:

Սոցիալական կառույցի անկայունությանն ու անհատապաշտությանը գումարվում էր կայսրության բազմազգ ու բազմադավան պատկերը, և այդ ամենը միասին իր հերթին նպաստում էր պետական կենտրոնացվածությանը [10, cc. 48, 81]:

Բյուզանդիան իրեն դիտարկում էր ոչ իբրև անտիկ աշխարհի սուկական ժառանգորդ, այլ աստվածաշնչյան ու հռոմեական ժամանակներից եկող և աստվածային նախախնամությամբ առաջ ընթացող մարդկային պատմության գագաթնակետ, որում արդեն իրագործված է Քրիստոսի երկրային թագավորությունը: Գոյություն ունեցող բյուզանդական կարգերը հռչակվում էին իդեալական [10, c. 88]: Եվ դրանցում նոր փոփոխություններ չէին ակնկալվում: Ավանդապահությունը, հավատարմությունը հունա-հռոմեական ու ուղղափառ քրիստոնեական արժեքներին բնութագրում էր բյուզանդականության էությունը կյանքի տարբեր ոլորտներում՝ իրավունք, տնտեսություն, արվեստ, գրականություն և այլն, բայց առավել ընդգծված՝ պետական կարգ և վերջինս հիմնավորող գաղափարախոսություն: Դրա առանցքում ոչ թե նորի ստեղծումն էր, այլ եղածի հաստատումն ու ամրագրումը:

Այս տեսանկյունից, թերևս, առավել բնութագրական է IXդ. երկրորդ կեսի - Xդ. ժամանակաշրջանը, երբ Բյուզանդիան, «ուշքի գալով» անցյալի ներքին ու արտաքին ցնցումներից, թևակոխեց իր առավելագույն բարգավաճման ու հզորացման շրջանը: Այդ շրջանի գործիչների, առաջին հերթին պատրիարք Փոտի, Վարդաս Մամիկոնյանի, Լևոն Մաթեմատիկոսի, Մակեդոնական (Հայկական) հարստության կայսրերի գործունեությունը համակված էր, կարելի է ասել, բյուզանդական համակեցության «իդեալական կարգի» (τῶν)՝ հաստատման կարգախոսով: Նախ և առաջ այդ «կարգը» հաստատվեց տեսության ծիրում՝ ծնելով վերը հիշատակված և բազում այլ գրական ստեղծագործություններ՝ Փոտի «Մյուրիոբիբլիոնը» (իդեալականորեն համակարգված անտիկ գրական ժառանգություն), Կոստանդին Է կայսեր ստեղծագործությունները (իդեալական պալատական կարգեր, կայսրության իդեալական վարչական կազմակերպություն,

¹ Այս տերմինը կիրառված է մեր օգտագործած գրականության մեջ [4, c. 145], սակայն վերաբերում է միայն գրականության բնագավառում Փոտի իրականացրած գործունեությանը: Մեր կարծիքով, այդ հասկացությանը կարելի է տալ ավելի լայն կիրառություն:

արտաքին աշխարհի հետ քաղաքական հարաբերությունների իդեալական համակարգ, իդեալական գյուղատնտեսություն և այլն), նույն կայսեր նախաձեռնությամբ ստեղծված նշանավոր հանրագիտարանային ժողովածուները (որոնցում ամբողջացված են գործնական կյանքի տարբեր բնագավառների վերաբերող արժեքավոր գիտելիքներ ու խորհուրդներ), Լևոն Զ-ի և Կոստանդին Է-ի «Տակտիկները» (իդեալական բանակ ու ռազմական կազմակերպություն), Գենեսիոսի պատմագիտական երկը (իդեալական պատմական զարգացումներ)... և այլն, և այլն:

Տարբեր ստեղծագործություններում ներկայացված իդեալական պատկերների ընդհանրացմամբ կերտվում էր իդեալական Բյուզանդիայի համապատկերը, որում կենտրոնական տեղը հատկացված էր, հարկավ, իդեալական կայսեր կերպարին: Իբրև այդպիսին «Մակեդոնական վերածննդի» պատմագրությունը ներկայացրեց Բարսեղ Ա-ին [4, cc. 138-140]:

Տեսությանը փորձ էր արվում համապատասխանեցնել իրականությունը, առաջին հերթին պետության կենսական շահերին վերաբերող խնդիրներում: Տնտեսության ոլորտում դա կայսրության և մայրաքաղաքի արտաքին առևտրական բալանսը վերահսկող պետական մեխանիզմների, հարկահանության համակարգի սահմանումն էր, ինչպես նաև հռոմեական առևտրաարհեստավորական կոլեգիաների վերակազմակերպումը (ոչ ուշ քան IX դարում): Վերջիններիս գործունեությունը կարգավորվում ու մանրակրկիտ ձևով վերահսկվում էր հաջորդ դարի սկզբի պաշտոնական փաստաթղթում՝ «Էպարքոսի գրքում» ներկայացված «իդեալական» դրության համաձայն: Գիտության ոլորտում իրականացված միջոցառումը, ինչպես արդեն նշել ենք, վերջինիս ինստիտուցիոնալացումն էր: Ըստ երևույթին, 845թ. հիմնված համալսարանի խնդիրների մեջ մտնում էր ոչ միայն բանիմաց ու գրագետ մարդկանց պատրաստումը, որոնց կարիքն ուներ կրկին վերելք ապրող պետությունը, այլև անտիկ ու բյուզանդական գիտական գիտելիքների համակարգումը: Պատրիարք Փոտի և նրա հաջորդների օրոք ավարտուն տեսք ստացավ բյուզանդական եկեղեցական պաշտամունքը՝ իրեն համապատասխանող նկարչական արվեստով ու իդեալական ճարտարապետությամբ (հայկական խաչա-գմբեթավոր տիպը): Ողջ Բյուզանդիայի ստեղծագործական կյանքում այդ ժամանակ տիրապետող դարձավ Կոստանդնուպոլսում հաստատված իդեալական ու կանոնիկ նորմերի ընդօրինակումը, ձգտումը մշակութային միաձևության¹: Փոտի մասնակցությամբ Բարսեղ Ա կայսրը սկիզբ դրեց, իսկ Լևոն Զ-ը ավարտին հասցրեց խոշոր օրենսդրական մի ձեռնարկում՝ իրականացված հռոմեական իրավունքի ոգով: Այդ ձեռնար-

¹ Դրանով դասական բյուզանդական մշակույթը էականորեն տարբերվում էր Հայաստանից, ուր ամեն նահանգ կարող էր ունենալ սեփական արվեստի դպրոցը:

կումը Մակեդոնական հարստության գլխավոր ծառայությունն էր, որով Մ.Սարգսյանը բյուզանդական պետականությունը ստացավ իր դասական տեսքը [4, c. 227]: Դրանում կարևոր տեղ ունեւ պաշտոնեական աստիճանակարգի վերջնական հաստատումը: Հետաքրքիր է նշել բյուզանդական պետության մի էական տարբերություն Հայաստանից, ուր սպարապետությունը գլխավոր գործակալությունն էր, իսկ սպարապետը նախարարությանը (զինվորական դասին) առաջնորդող դեմքն էր: Փոխարենը կայսրության պաշտոնեական համակարգում առանցքային նշանակություն ունեւ ֆինանսական գերատեսչությունը, քանզի պետական ֆինանսները կայսերական իշխանության գլխավոր լծակն էին [19, c. 65; 31, էջ 522, 534]:

Բյուզանդական իդեալի իրագործումն ունեւ նաև արտաքին քաղաքական ուղղվածություն: Բարսեղ Ա-ի և Կոստանդին Ծիրանածնի վերակենդանացրած գաղափարն օյկումենեի միակ օրինական կայսրության բացառիկ իրավունքների մասին փորձեցին իրականացնել հաջորդ կայսրերը՝ Նիկեփորոս Բ-ը, Հովհաննես Ա-ն, Բարսեղ Բ-ը: Դրանով պետք է բացատրել նրանց ծավալապաշտական նկրտումները՝ այդ թվում Հայաստանի նկատմամբ:

Այսպիսով, ակնհայտ է այն խոր տարբերությունը և նույնիսկ ներհակությունը, որ առկա էր բյուզանդական ու միջնադարյան հայկական պետականության միջև: Այստեղից էլ՝ հայ նախարարական համակարգի ու հայ եկեղեցու դեմ այն քայքայիչ քաղաքականությունը, որ Բյուզանդիան իրականացնում էր իր տիրապետության տակ հայտնված հայկական հողերում (լինեւ դա V թե XI դարում): Հետաքրքիրն այն է, որ այդ քաղաքականությունը մեծ եռանդով իրականացնում էին նաև հայազգի կայսրերն ու ղեկավար գործիչները: Ինտեգրվելով «հռոմեական» հասարակությանը, յուրացնելով նրա ավանդույթները՝ նրանք դառնում էին վերջիններիս պաշտպաններն ի վնաս հենց հայկականի: Կայսրությունում մեծ թվով հայազգի դեմքերի առկայությունն, ըստ էության, որևէ հիմք չի տալիս այն կոչելու «հունա-հայկական» կամ «հայ-հունական»: Մեր կարծիքով, ընդհանրապես տեղին չէ որևէ էթնիկ բնորոշում տալ ունիվերսալիզմի վրա կառուցված ապագային կայսրությանը, ուր բոլոր «ուղղահավատ» քրիստոնյաները (անկախ իրենց ծագումից) հռչակվում էին «հռոմեացիներ»՝ քաղաքակիրթ աշխարհի միակ իրական քաղաքացիներ:

Որքան էլ բյուզանդական կարգերը պաշտոնական գաղափարախոսության կողմից իդեալական ու անփոփոխ հռչակվեին, փոփոխությունները Բյուզանդիայի կյանքում, այնուամենայնիվ, տեղի էին ունենում: Տեղի էին ունենում ի

սկզբանե, հայկական ծագման կայսրերի ու գործիչների մասնակցությամբ և, պետք է կարծել, ոչ առանց հայկական արժեքների ազդեցության: Փոփոխություններին ու արտաքին ազդեցություններին, թերևս, նպաստում էր այն, որ ինքը՝ կայսրությունը, հակասականությամբ լի աշխարհ էր և, ի հետևանս դրա, հաճախակի որոնման ու շարունակական ինքնակայացման մեջ էր:

VII դարում Բյուզանդիան ապրեց մի շարք վերափոխումներ, որոնց նախաձեռնողը Հերակլ Ա կայսրն էր (610-641թթ.) [4, cc. 21, 60-62]: Այդ վերափոխումների կարգախոսը ցնցում ապրած կայսրությունում կայունության վերականգնումն էր և առաջին հերթին՝ պետական իշխանության ամրապնդումը: Ի մասնավորի, խնդիր էր դրված ապահովել պետական իշխանության շարունակականությունը: Հռոմից ավանդված կարգի համաձայն՝ այդ ֆունկցիան իրականացնում էր սենատը՝ իշխանությունը լեգիտիմ ճանապարհով փոխանցելով մի կայսրից մյուսին: Սակայն դարասկզբի դաժան քաղաքացիական պատերազմն ու օտար ներխուժումները հանգեցրին սենատը կազմող հասարակական ուժի (կալվաժատեր մագնատների) փաստացի ոչնչացման: Ուստի անհրաժեշտ էր վերացնել իշխանության լեգիտիմության կախվածությունը սենատի ու ներքաղաքական կյանքի ելևէջներից: Իբրև իշխանության շարունակականությունն ապահովող միջոց Հերակլը (հետևելով իշխանությունը բռնակալած իր նախորդի՝ Փոկասի օրինակին) ընտրեց արևելյան պետական մտածողությանը բնորոշ թագադրությունը: Իբրև գահակիցներ ու ենթադրյալ գահաժառանգներ կայսրը թագադրեց նաև իր երկու որդիներին: Դրանով փորձ էր արվում ամրագրել իշխանության ժառանգականության և թագավորող հարստության սկզբունքները: Ինքը՝ Հերակլը, ինչպես առիթ ունեցանք նշելու, սերում էր Փոքր Ասիայից, ավելի ստույգ՝ Կապադովկիայից, ուր բավական մեծ էր հայկական ու արևելյան բնակչության թիվը և ուժեղ էին Արևելքի հետ կապերը: Ուստի չպետք է բացառել արևելյան (իրանական, հայկական) ազդեցությունը Հերակլի գործողությունների վրա (առավել ևս, եթե իրական է նրա հայկական ծագումը): Այդ կայսեր ձեռնարկումը փորձեց շարունակել Կոստանդին Դ-ը (668-685թթ.): Սակայն ժառանգական իշխանության հաստատմանն ուղղված քայլերն այդ ժամանակ ձախողվեցին և առայժմ մնացին որպես նախադեպ: Հետագա դարերում էլ որդին հաճախ ժառանգում էր հոր գահը, բայց միայն շնորհիվ նրա, որ ժամանակին թագադրվել էր որպես հոր գահակից [10, c. 84]: Ավելի հաճախ, սակայն, գահ էր բարձրանում նա, ով գործարքով, դավադրաբար կամ խռովությամբ տիրանում էր իշխանությանը մայրաքաղաքում:

Հելլենիստական ավանդույթներով ապրող Արևելքի բնակչության մեջ պետության հեղինակությունը բարձրացնելու նպատակով Հերակլն ընդու-

նեց հունական «բասիլևս» (բառացի՝ թագավոր) տիտղոսը, իսկ հունարենը դարձրեց պետական գործավարության լեզու՝ լատիներենի փոխարեն: Էական բարեփոխումներ ու պարզեցումներ կատարվեցին պետական ապարատում՝ բարձրացնելու համար նրա արդյունավետությունը:

Ներքաղաքական կյանքում փոխզիջումների հակված Հերակլին պատկանում է Քրիստոսի միակամության մասին կրոնական դրույթը [14, p. 39]: Այն կոչված էր հաշտեցնելու երկաբնակ քաղկեդոնականներին ու միաբնակներին և միավորելու պառակտված Բյուզանդիան պարսիկների դեմ ծանր պատերազմում: Իրենք՝ պարսիկները, քաղաքական նպատակներից ելնելով, սեփական տերությունում որպես ճշմարիտ քրիստոնեական դավանանք ճանաչել էին միաբնակությունը (Տիգրանի 615թ. ժողովում): Հերակլի այս ձեռնարկումը կարճատև արդյունքներ տվեց. 681թ. Տիգրեական ժողովում քաղկեդոնականությունը վերականգնվեց: Ավելի ուշ՝ 712թ. հայազգի կայսր Փիլիպպիկոս-Վարդանը կրկին վերահաստատեց միակամությունը: Սակայն պետական դավանանքի կարգավիճակն այն պահպանեց միայն մեկ տարի [4, c. 46]:

Այլ ճակատագիր ունեցավ Հերակլի օրոք ծնունդ առած թեմական համակարգը, որը, զարգանալով VII-VIII դարերում, աստիճանաբար փոխարինեց կայսրության նախկին պրովինցիալ բաժանմանը և դարձավ կառավարման ընդհանուր համակարգ: Թեմերը խոշոր ռազմական և միաժամանակ վարչական օկրուգներ էին: Դրանց կառավարիչները կամ հրամանատարները (ստրատեգոսները) օժտված էին տեղերում լիակատար իշխանությամբ (ռազմական, գործադիր, դատական) և պատասխանատու էին միայն կայսեր առաջ: Թեմական զորքերի սոցիալական հիմքը տեղի ազատ գյուղացիությունն էր՝ ինչպես բնիկ, այնպես էլ եկվոր (այդ թվում մեծաքանակ հայկական): Նախկին կալվածատիրական դասերի կործանումից հետո ազատ գյուղացիությունը (ստրատիոտները) կայսրության ամենախոշոր հասարակական խումբն էր, հիմնական արտադրողն ու հարկատուն և VII-Xդդ. բանակի սոցիալական հիմքը: Զինվորական ծառայության դիմաց ստրատիոտները պետությունից ստանում էին ժառանգական տիրույթներ և օգտվում առանձին արտոնություններից: Թեև թեմական կառույցը հանգեցնում էր երկրի որոշակի ապակենտրոնացման, այն թույլ տվեց պետությանն ավելի ճկունորեն օգտագործել իր տնտեսական ու ռազմական ռեսուրսները և հետագայում աստիճանաբար հասնել կայունության [6, c. 129; 20, pp. 18-19; 4, cc. 19, 290]:

Ընդհանուր առմամբ, Հերակլի և նրա մերձավոր ժառանգորդների ձեռնարկումները դեռևս հեռու էին իրենց վերջնական նպատակից: Հակասականն այն է, որ այդ միջոցառումների ժամանակ ձևավորված կամ թափ առած հասարակական-քաղաքական ուժերը վտանգում էին կայսերական

իշխանությունը: Մայրաքաղաքում կայսեր անձնական իշխանությանը խոչընդոտ էր ներկայացնում բարձրագույն պաշտոնությունը: Երկուսն էլ, սակայն, պետության խիստ կենտրոնացման մեջ էին տեսնում սեփական ազդեցության ամրապնդման միջոցը: Սյուս կողմից պետության միասնությանը սպառնալիք էր բխում թեմերի կամակոր զինվորական հրամանատարությունից, որը փորձում էր հնարավորինս նվազեցնել կենտրոնի վերահսկողությունը և տեղերում հաստատել ֆեոդալական տիպի (մասնավոր ու ժառանգական) իշխանություն: Երկու հակադիր խմբավորումներում էլ (այսպես կոչված «բյուրոկրատներ» և «գորավարներ») հանդիպում ենք հայերի: Ուշադրության են արժանի հատկապես թեմական վերնախավի հայազգի գործիչները, որոնք այդ վերնախավում մեծ թիվ էին կազմում ու մեծ կշիռ ունեին. նրանք և՛ ակտիվորեն մասնակցում էին «գորավարների» քաղաքական կյանքին, և՛ ղեկավարում էին այն, և՛, ըստ ամենայնի, ազդում էին այդ վերնախավի պատկերացումների ու պահանջումների վրա: Վերը նշվեց նախարարական կարգի այն առանձնահատկությունը, որ ֆեոդալի (փաստորեն, տեղական «միապետի») քաղաքական իշխանությունը սեփական տարածքում զուգակցվում ու հենվում էր հողի սեփականության վրա: Այսպիսի միտումներ նկատում ենք VII-VIIIդդ. փոքրասիական թեմական վերնախավի մոտ: Իհարկե, դժվար է միանշանակ պնդել, որ հենց հայ նախարարությունն է դարձել կայսրության կյանքում այդ միտումների նախաձեռնողը: Ըստ երևույթին, Բյուզանդիայում առկա էին դրանց որոշակի ներքին նախադրյալներ, և չլինել պետական ամբողջատիրությունը, երկիրը, հավանաբար, կանցներ սոցիալական զարգացման այն ուղին, ինչ Հայաստանն ու միջնադարյան Եվրոպան: Սակայն կարելի է չկասկածել, որ արդեն կայացած հայկական սոցիալական ինստիտուտներն ու արժեքները պետք է էականորեն պայմանավորեին վերոհիշյալ միտումները: Թեմերի ձևավորումից ի վեր հսկայական լիազորություններ ստացած գորահրամանատարները ձգտում էին ստեղծել խոշոր ֆեոդալական կալվածքներ, սեփականել պետության կողմից վստահված իշխանությունը և ստրատիգոսներից զանձվող հարկերը, վերջիններիս վեր ածել ֆեոդալապես կախյալ գյուղացիության: Կայսեր անձի, «բյուրոկրատների» ու «գորավարների» միջև VIIդ. վերջին-VIIIդ. սկզբին ծավալվեց զինված պայքար: Դրա ընթացքում երկու անգամ տապալվեց Հերակլի հարստության վերջին կայսր Հուստինիանոս Բ-ը (685-695, 705-711թթ.), որը բռնաձնշումների էր դիմել զինվորականության ու Կոստանդնուպոլսի ավագանու դեմ: 711թ. պետական հեղաշրջման արդյունքում գահ բարձրացավ «գորավարների» ներկայացուցիչ Փիլիպպիկոս-Վարդանը (711-713թթ.): Սակայն ինքը շուտով զոհ գնաց քաղկեդոնական «բյուրոկրատների» դավադրությանը: Հետևեց նոր քաղաքացիական պատերազմ, ապա՝ «բյուրո-

կրատներին» պարտության մատնած թեմական գորքերի միջև երկպառակություն: Կոստանդնուպոլսի հարևանությամբ գտնվող, բայց ավելի թույլ Օփսիկիացիների թեմը պարտվեց Անատոլիկների ու Արմենիակների ուժերին: Վերջիններին գլխավորում էին, համապատասխանաբար, փոքրասիական կալվածատերերի առաջնորդ Լևոն Իսավրացին (կայսր Լևոն Գ (717-741թթ.)՝ Իսավրական հարստության հիմնադիր) և նրա փեսա Արտավազը, որին վստահվեց պարտված թեմի կառավարումը:

Նոր հարստության (717-802թթ.) անվան հետ է կապված պատկերամարտների և պատկերապաշտների միջև պայքարը, որը նախորդի փաստացի շարունակությունն էր¹: Պատկերամարտության (սրբապատկերների պաշտամունքի դեմ պայքարի) կարգախոսով հանդես եկան Իսավրյան կայսրերն ու նրանց գլխավորած փոքրասիական թեմական ավագանին: Նրանց աջակցեց տեղական եպիսկոպոսների և բնակչության մեծ մասը, որի մեջ զգալի տոկոս էին կազմում այդ պաշտամունքը մերժող պավլիկյաններն ու միաբնակները (հայեր, ասորիներ): Շարժման արմատները բավական խճճված են: Զինվորական ավագանին տրամադրված էր VII-VIII դարերում մեծ հարստություններ ու խոշոր հողային տիրույթներ ձեռք բերած Կոստանդնուպոլսի եկեղեցու և հատկապես վանքերի դեմ. վերջիններս լուրջ մրցակից էին դարձել թեմական վերնախավի համար, որը ձգտում էր վերաբաժանումների: Հոգևորականության տնտեսական, հետևաբար և քաղաքական հզորացումն անհանգստացնում էր կայսրերին: Դեռ Հերակլի հարստությունը եկեղեցական ղեկավարության հետ բախվել էր աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերության հարցում: Այժմ դրությունն էլ ավելի էր սրվել, քանզի եկեղեցին ու վանքերը տնտեսական ու ռազմական սուր կարիքներ ունեցող պետությունից խլում էին մարդկային ու նյութական մեծ ռեսուրսներ: Կայսրերի առաջ կարևոր խնդիր էր դրված նաև սաստել թեմական զինվորականությանը, կանխել պետության հնարավոր մասնատվածությունը: Կործանման իրական վտանգին ենթարկված կայսրությանն անհրաժեշտ էր բոլոր հնարավոր միջոցների մոբիլիզացիա: Դրան ուղղված քայլերի գաղափարական հիմնավորումն էլ պատկերամարտությունն էր [4, cc. 64-67]: Այդ գաղափարախոսությունը, թերևս, պետք է ենթարկված լիներ հայկական ազդեցությանը՝ դատելով նրանից, որ սրբապատկերների պաշտամունքը դեռ VII դարից առավել ակտիվ դատապարտվում էր հենց հայ իրականության մեջ [16, part I, pp. 66, 68; 32, c. 52]: Իսկ հայության զգալի հատվածն էլ իր գործուն մասնակցությունը ցուցաբերեց շարժմանը:

Առաջին պատկերամարտ կայսեր՝ Լևոն Գ-ի օրոք պայքարը դեռ

¹ Պատկերամարտության մասին մանրամասն տե՛ս 32, cc. 52 սղ.

նախնական փուլում էր: Նրա մահվանից հետո փեսան՝ Արտավազը, հարեց Կոստանդնուպոլսի ընդդիմադիր ուժերին: Գրավելով մայրաքաղաքը՝ նա օծվեց կայսր (742-743թթ.) և վերականգնեց սրբապատկերների պաշտամունքը, որ արգելվել էր Լևոնի կողմից 726թ.: Սկսված քաղաքացիական պատերազմում, սակայն, պատկերապաշտները պարտություն կրեցին: Իշխանությունը վերականգնած Իսավրյան հարստության կայսրերը՝ Կոստանդին Ե-ն (741-775թթ.) և Լևոն Զ-ը (775-780թթ.), միայն խստացրին պայքարն ընդդիմության դեմ և հասան վճռական հաջողությունների: Նրանց անմիջական հենարան էր ծառայում փոքրասիական թեմական բանակը, որը շուտով գրեթե ամբողջությամբ հայտնվեց հայերի հրամանատարության տակ. 770-ական թթ. Փոքր Ասիայի հինգ թեմերից չորսը (Անատոլիկների, Բուկկելարների, Արմենիակների, Օփսիկիացիների) ղեկավարում էին հայ նախարարները՝ համապատասխանաբար, Արտավազ Մամիկոնյանը, Տաճատ Անձևացին, Վարազ-Տիրոց Բագրատունին և Գրիգոր Մամիկոնյանը [18, էջ 91]: Նրանք 780թ. Մարաշի նշանավոր ճակատամարտում կարևոր հաղթանակ տարան արաբների դեմ: Կայսրերն օգտագործում էին թեմական հրամանատարությանը քաղաքական խնդիրներում, բայց միաժամանակ սանձահարում նրանց՝ ձգտելով ստրատիգոսներին պահել պետության անմիջական տրամադրության տակ և ամրապնդել սեփական դիրքերը մայրաքաղաքի շրջաններում:

VIII դ. վերջը-IX դ. առաջին կեսը նշանավորվեցին պատկերամարտների շարժման թուլացմամբ, նրանց պառակտմամբ, պատկերապաշտների նոր ակտիվացմամբ ու կողմերի միջև աստիճանական մերձեցմամբ՝ հանգելով պատկերապաշտության վերականգնմանը փոխզիջման հիման վրա: Մինչ այդ, սակայն, արմատականորեն տրամադրված պատկերամարտները մի քանի փորձ արեցին՝ կրկին տիրանալու VIII դ. վերջին կորցրած իշխանությանը: Պատկերապաշտ կայսրուհի Իրենեի (780-802թթ.) և Նիկեփորոս Ա-ի (802-811թթ.) քաղաքականությունից դժգոհ թեմական ավագանին մի շարք խռովություններ բարձրացրեց: 790թ. ապստամբեց հայ զորավար Ալեքսիոս Մուսելեի գլխավորած Արմենիակների թեմը՝ երկու տարով զահրնկեց անելով կայսրուհուն: Իշխանությունը հայտնվեց վերջինիս որդու՝ Կոստանդին Զ-ի շուրջը համախմբված զինվորականության (Ալեքսիոս Մուսելե, հայազգի Վարդաս և այլն) ձեռքում: Մակայն բուլղարների դեմ պատերազմում 792թ. կրած պարտությունն ու Վարդասի մահը թուլացրին պատկերամարտներին: Վերջիններիս սոցիալ-տնտեսական դիրքերի դեմ ակտիվ քաղաքականություն սկսեց կայսր Նիկեփորոսը՝ հանդիպելով բուռն դիմադրության: 802թ. Անատոլիկների թեմի հրամանատար Վարդան «Թուրքը» քաղաքացիական պատերազմ սկսեց՝ մտադրվելով տիրանալ

գահին: Նրա անհաջող փորձը 808թ. կրկնեց մեկ այլ հայազգի զորավար Արշավիրը: Վերջապես, 813թ. իշխանությունը կարողացավ գրավել Անատոլիկների առաջնորդ Լևոն Արծրունին (կայսր Լևոն Ե, 813-820թթ.): Նա դաժան հալածանքներ սկսեց բոլոր գաղափարական հակառակորդների դեմ: Կրկին վերականգնվեց պատկերամարտությունը, որի նոր գաղափարական առաջնորդը դարձավ ապագա պատրիարք Հովհան Քերականը: Լևոնի բռնաճնշումները միայն պառակտում մտցրին թեմական վերնախավի մեջ, որն այնքան էլ շահագրգռված չէր սրել հարաբերությունները մայրաքաղաքի ավագանու դեմ, մանավանդ գյուղում առկա սոցիալական լարվածության պայմաններում: Վերջինիս ծայրահեղ դրսևորումը գրեթե ողջ կայսրությունը համակած Թովմա Սլավոնացու ապստամբությունն էր (821-823թթ.), որին մասնակցեցին նաև հայ ստրատիոտներ ու պավլիկյաններ, նույնիսկ հայ զորավարներ: Նման պայմաններում տեղի էր ունենում բյուզանդական վերնախավի որոշակի համախմբում: Արդեն 820թ. հեղաշրջմամբ իշխանության եկավ Ամորիական հարստությունը (փոքրասիական ամենախոշոր՝ Ամորիոն քաղաքից՝ Անատոլիկների թեմում), որն արտահայտում էր չափավոր պատկերամարտների շահերը: Չնայած պատկերապաշտների դեմ պայքարի որոշակի խստացմանը Հովհան Քերականի պատրիարքության ժամանակ (837-842թթ.), ընդհանուր առմամբ այդ պայքարն անկում էր ապրում: Դրան մի կողմից նպաստեց թեմական ուժերի ծանր պարտությունն ու փոքրասիական ավագանու զգալի մասի ոչնչացումն արաբների կողմից 838թ.: Թեոփիլոս կայսեր կինն էլ՝ Թեոդորա Մամիկոնյանը, սերտ կապերի մեջ էր մայրաքաղաքի պաշտոնեական-ձեռներեցական վերնախավի հետ և երկու ընդդիմադիր ուժերի հաշտեցման կողմնակից էր: Ամուսնու մահվանից հետո նա դարձավ կայսրության կառավարիչը և 843թ. վերականգնեց սրբապատկերների պաշտամունքը՝ առանց վերանայելու պայքարի մյուս բոլոր արդյունքները: IXդ. հաջորդ տասնամյակներում Կոստանդնուպոլսի ու Փոքր Ասիայի ավագանու միջև պայքարն ընթանում էր միայն այն հարցի շուրջ, թե ով կզլխավորի միավորվող վերնախավը: Թեոդորայի կառավարումը նշանակում էր քաղաքացիական ավագանու տիրապետում, սակայն 856թ. փոքր հեղաշրջմամբ իշխանության եկավ պրովինցիալ զինվորական շրջաններին նախապատվություն տվող Վարդաս Մամիկոնյանը՝ Թեոդորայի եղբայրը: Այնուհետև, 866 և 867թթ. Վարդասի ու Միքայել Գ կայսեր սպանությունից հետո պետության ղեկը կրկին ստանձնեց քաղաքացիական պաշտոնեությունը՝ Բարսեղ Ա-ի զլխավորությամբ (867-886թթ.): Չնայած հայազգի զորավարներ Սմբատի, ավելի ուշ՝ Հովհաննես Կուրկուասի բարձրացրած ապստամբություններին՝ Բարսեղին, այնուամենայնիվ, հաջողվեց իր շուրջը համախմբել

փոքրասիական գորահրամանատարությանը: Վերջինիս առավել նշանավոր ներկայացուցիչն էր Նիկեփորոս Փոկասը, որը ստանձնեց զինված ուժերի ղեկավարումը:

Դրանով իսկ ավարտվեց տակավին VII դարից Բյուզանդիայի զարգացման ուղիների շուրջ ծավալված պայքարի առաջին փուլը: Արդյունքում՝ բյուրոկրատական կառավարման սկզբունքներն ու կենտրոնացման միտումները հաղթանակ տարան երկրի ֆեոդալականացման նկատմամբ. Փոքր Ասիայի թեմական ավագանին այդպես էլ չկարողացավ հաստատել իր կալվածատիրական իշխանությունը տեղերում: Նա անգոր գտնվեց միաժամանակյա պայքար մղելու մի կողմից՝ սոցիալապես տակավին ուժեղ ստրատիոտական խավի դեմ, մյուս կողմից՝ կայսերական իշխանության և Կոստանդնուպոլսի պաշտոնեական ու ձեռներեցական շրջանների դեմ: Բացի այդ, կալվածատիրական խավի ձևավորմանը խանգարում էին արտաքին ներխուժումները. VIIդ. երկրորդ կեսից Փոքր Ասիան գրեթե անընդհատ ենթարկվում էր արաբների ասպատակություններին: Միայն 740թ. արաբների դեմ Լևոն Գ-ի տարած հաղթանակը մի քանի տասնամյակով երկիրն անվտանգ դարձրեց՝ հնարավորություն տալով կալվածատիրությանը զարգանալ: Սակայն պատկերամարտ կայսրերի սանձահարող միջոցառումները, պատկերապաշտ տիրակալների թշնամական քաղաքականությունը, Թովմա Սլավոնացու խոշոր ապստամբությունը, 838թ. աղետը և, վերջապես, արաբների ու պավլիկյանների դեմ 860-ական թթ. ավերիչ պատերազմները ծանր հարված հասցրին թեմական ավագանու տնտեսական դիրքերին: Այդ ավագանու մեծ մասը չքացավ, այդ թվում ասպարեզից հեռացան հայկական նախարարական տները: Կալվածքները վերացան, և թեմական գորահրամանատարների համար կրկին իշխանության միակ աղբյուր դարձան իրենց պաշտոնական լիազորությունները: Վերոհիշյալ երկու հակադիր միտումներից երկրորդի հաղթանակն այն ժամանակ կնշանակեր ոչ միայն ֆեոդալական մասնատվածության հաստատում, այլև Բյուզանդիայի կործանում: Այն կանխելու միակ հնարավոր ձև կարող էր դառնալ հասարակական բոլոր ուժերի (զինվորականություն, բյուրոկրատիա, հոգևորականություն, քաղաքային խավեր, ստրատիոտներ) համախմբումը գահի շուրջ: Հետաքրքիրն այն պարադոքսալ իրողությունն է, որ թե՛ «գորավարներից», թե՛ «բյուրոկրատներից» սերած կայսրերի ու կառավարիչների մեծ մասը հասկանում էր դա և այս կամ այն կերպ միջոցներ էր ձեռք առնում այդ ուղղությամբ: Այդ գործընթացն ավարտուն տեսք ստացավ IXդ. վերջի հայազգի կայսրերի ջանքերով, որոնք էլ Բյուզանդիայի հետագա հզորացման հիմքը դրեցին:

Մակեդոնական հարստության օրոք Բյուզանդիայի վերելքը պայմա-

նավորված էր հենց կայսերական ամբողջատիրության ամրապնդմամբ: Մյուս կողմից՝ այդ ժամանակաշրջանին բնորոշ էին նոր էական տեղաշարժեր, որոնք տեղի էին ունենում հասարակական կյանքի խորքերում: Ըստ էության, վերածնվում էին երկրի ֆեոդալականացման նախկին միտումները, բայց արդեն նոր պայմաններում և ավելի վճռականորեն: Մի կողմից՝ դրան նպաստում էր VI դարից ի վեր աննախադեպ տևական խաղաղությունը, որ վայելում էր Փոքր Ասիայի մեծ մասը մինչև XI դ. երկրորդ կեսը: Էլ ավելի կարևոր էին ներքին պայմանները. ստրատիոտական խավի արագ շերտավորումն ու քայքայումը (կապված հարաճուն պետական պարտույթների և շուկայական հարաբերությունների ծավալման, նաև 920-ական թթ. սարսափելի սովի, 1030-ական թթ. բնական աղետների հետ), դրա արդյունքում միջին, ապա և խոշոր հողատերերի առանձնացումը համայնքից, պաշտոնետության նորահայտ ձգտումը՝ ձեռք բերել կալվածքներ (սկսած IX դ. վերջից-X դ. սկզբից): Վերջիններիս նկրտումներին ընդառաջ էր գնում Մակեդոնական հարստության հակասական հողային օրենսդրությունը, որն արտաքուստ կոչված էր պաշտպանելու ստրատիոտական հողատիրությունը: Իրենց հերթին, Ռոմանոս Ա, Կոստանդին Է և Բարսեղ Բ կայսրերի հողային օրենքները՝ ուղղված պրովինցիալ կալվածատերերի աճի դեմ, անհետևողական էին և տալիս էին միայն ժամանակավոր արդյունքներ:

Խոշոր կալվածատիրության աճն ու նոր տոհմիկության ձևավորումն արդեն X դարում սկիզբ է դնում բյուզանդական հասարակության մեջ ազնվականացման գործընթացին, որը տևում է մի քանի հարյուրամյակ: Ի հայտ են գալիս տոհմական ազգանուններ¹, վերնախավի ժառանգականության, մարդկանց բնական անհավասարության մասին պատկերացումներ: Կարևորություն է տրվում տոհմերի միջև խնամիական կապերի ձևավորմանը, յուրաքանչյուր տոհմի շուրջ կլիենտելայի և նույնիսկ սեփական զինված ջոկատների ստեղծմանը: Ազդեցության հասնելու գործում կալվածքների, կախյալ գյուղացիության և ազգակցական կապերի առկայությունը սկսում է դիտարկվել որպես այլընտրանք պետական պաշտոններին [10, cc. 58-60; 4, cc. 81-82]: «Ազնվականական» կենսակերպի արժեքների մեջ կարևոր նշանակություն են ստանում մարտական հմտությունները: Կատարվող տեղաշարժերն արտացոլում են գտնում գրականության մեջ, ուր մեծ ուշադրություն է դարձվում ռազմական թեմային, գլխավոր հերոսներ են դառնում նոր տիպի արիստոկրատներն ու զորավարները, գովերգվում է զորավար-կայսրերի քաջությունը ռազմի դաշտում [4, cc. 74, 81, 139, 141]: Հասարակության ազնվականացումն ազդում էր, ի դեպ, Մակեդոնական հարստության կայսրերի վրա, որոնց մոտ սկսում էր ձևավորվել թագավո-

¹ Բյուզանդիայում մինչև IX դարն ազգանուններ ունեին, թերևս, միայն հայ նախարարական տները:

րող հարստության լեգիտիմության ֆեոդալական սկզբունքը:

Անկասկած է վերոհիշյալ գործընթացների վրա հայկական իրակա-
նության ազդեցությունը, թեև այս ժամանակաշրջանում ասպարեզ իջած
մոտ 300 նոր տոհմերի շարքում հայկական էին, լավագույն դեպքում, 15%-ը
[26, շ. 147]: Այդ ազդեցության վկայությունը ոչ միայն արիստոկրատիզմի
ոգով ստեղծված «Դիզենիս Ակրիտաս» էպոսն է, ուր գործողությունները
ծավալվում են կայսրության հայաբնակ թեմերում, իսկ գլխավոր հերոսը
հայկական ծագում ունեցող տոհմիկ միջավայրի պտուղ է: Հասկանալի է
է այն, որ X-XI դարերում մայրաքաղաքի պաշտոնեական ավագանու դեմ
ձևավորվող ժառանգական արիստոկրատիայի քաղաքական պայքարը
սկզբնապես ղեկավարել են հիմնականում հայկական ծագման տոհմերը,
ինչը, թերևս, խոսում է նրանց սոցիալական առավել հասունության մասին:
Այդ պայքարը, փաստորեն, «բյուրոկրատների» և «գորավարների» վաղեմի
հակամարտության նոր և առավել դրամատիկ փուլն էր, որ ստացավ պաշ-
տոնեական ու ժառանգական արիստոկրատիայի միջև պայքարի տեսք:
Պատմությունը Բյուզանդիային վերջին անգամ էր ժամանակ ու հնարավոր-
ություն ընձեռում՝ հասարակական հարաբերությունները վերակառուցե-
լու ավելի առաջադիմական՝ ֆեոդալական ձևով, և խիստ կենտրոնացված
ինքնակալական վարչաձևը վերափոխելու ապակենտրոնացված հիերար-
խիկ կարգով: Հակամարտող կողմերն էլ պայքարը ծավալեցին ուժերի գե-
րագույն լարմամբ¹:

Մինչև Տղ. երկրորդ կեսը պայքարը սկզբնավորման ընթացքում էր և
սահմանափակվում էր կայսերական պալատում պրովինցիալ ավագանու
դիրքերն ամրապնդելու ձգտումներով: Տեղի ունեցան հեղաշրջման անհա-
ջող փորձեր՝ հույն արիստոկրատ Անդրոնիկոս Դուկասի (906թ.) և նրա
որդի Կոստանդինի (913թ.) գլխավորությամբ: Անհաջողությամբ ավարտվեց
հայ գորահրամանատար Լևոն Փոկասի պայքարը հանուն իշխանության:
Փոխարենը, ծովակալ Ռոմանոս Լակապենոսի հաղթանակը (919թ.) նշա-
նակում էր պաշտոնեական շրջանների հերթական հաջողություն: Մի շարք
տնտեսական օրենքներ հրապարակելով պրովինցիալ կալվածատերերի
դեմ՝ նոր կայսրը միաժամանակ ձգտում էր իրեն մերձեցնել փոքրասիա-
կան տոհմերի՝ հայ Կուրկուասներին և Մուսելեներին, հույն Արգյուրոսնե-
րին և այլն: Մասնավորապես, գորավար Հովհաննես Կուրկուասին վստահ-
վեց Արևելքի գորքերի հրամանատարությունը, Ալեքսիոս Մուսելեին՝ ռազ-
մածոլային ուժերը: Լակապենոսների ընտանեկան իշխանությունը տա-
պալվեց 944թ. մայրաքաղաքի ավագանու ներսում եղած պայքարի արդյուն-
քում: Կոստանդին Է-ն և Ռոմանոս Բ-ն շարունակեցին զինվորական վեր-

¹ Մանրամասն տե՛ս 32, շ. 180 շ. 11.

նախավին սիրաշահելու քաղաքականությունը՝ նախապատվություն տալով այնպիսի հայկական տոհմերի, ինչպիսիք էին Փոկասները, Լիփսերը, Կուրտիկեսները: Դարի կեսին հենց նրանց ձեռքում էին գլխավոր զինվորական պաշտոնները. կայսերական պահակազորի հրամանատարն էր Մանվել Կուրտիկեսը, վարձկանների գորախմբի հրամանատարը՝ Կոստանդին Լիփսը, Արևելքի և Արևմուտքի դոմեստիկոսները՝ Նիկեփորոս և Լևոն Փոկաս եղբայրները: Պրովինցիալ զինվորական վերնախավի շրջանում այդ ժամանակ տիրապետող էին քաղաքացիական ավագանու հետ փոխզիջման տրամադրությունները: Փոխզիջման կարգախոսով էին առաջնորդվում նույնիսկ հեղաշրջմամբ գահը գրաված զինվորական-կայսրերը՝ Նիկեփորոս Բ Փոկասը (963-969թթ.) և Հովհաննես Ա Չմշկիկը (969-976թթ.): Այդ ժամանակ զինվորականության հեղինակությունն ու քաղաքական ակտիվությունը զգալիորեն աճեց՝ կապված 960-970-ական թթ. կայսրության ճակատներում տարած փայլուն հաղթանակների հետ: Մյուս կողմից՝ զինվորականների տրամադրության տակ չկային այնպիսի վասալական ուժեր, որոնց կարելի լիներ վատահել ներքաղաքական պայքարում: Ֆեոդալականացող մագնատների անձնական զինված ջոկատները դեռ հեռու էին ասպետության պես պրոֆեսիոնալ զինված ուժեր դառնալուց: Ստրատիոնների վրա հենվելն էլ անիրական էր նրանց արագ տնտեսական քայքայման պատճառով: Վերջին հանգամանքն ընդհանրապես սպառնալիք էր ողջ կայսրության համար: Որպես իսկական ռազմագետ՝ Նիկեփորոս Բ-ը հասկանում էր դա: Ուստի իշխանության գալով՝ նա բանակի բարեփոխում իրականացրեց. ստրատիոնների ընդհանուր զանգվածից առանձնացվեցին ունևոր (միջին հողատեր) գյուղացիները, որոնք կազմեցին նոր ձևավորված ծանրազեն այրուձիու (կատաֆրակտների) սոցիալական հիմքը: Կրճատվեցին նրանցից գանձվող հարկերը՝ հնարավորություն տալով հոգալու սեփական ռազմական ծախսերը: Կատարվեցին նաև նորամուծություններ սպառազինության ու մարտավարության մեջ: Նիկեփորոսի բարեփոխումը էապես բարձրացրեց բանակի որակը. հենց կատաֆրակտներին էր կայսրությունը պարտական վերոհիշյալ հաղթանակներով: Հայազգի կայսեր ձեռնարկումը կարող էր ունենալ ավելի հեռուն գնացող սոցիալ-քաղաքական հետևանքներ. Բյուզանդիայի առջև փաստորեն բացվում էր բանակի պրոֆեսիոնալացման հնարավորություն, որն աստիճանաբար կվերակառուցվեր ֆեոդալական հիերարխիայի սկզբունքով:

Ճգ. զինվորական կայսրերի փորձը՝ խաղաղությամբ ու փոխզիջումների հիման վրա իշխանության բերել կալվածատեր զինվորականությանը, ձախողվեց: Փոխարենը պայքարը տեղափոխվեց ռազմական հարթություն՝ ավելի արմատական տրամադրված Վարդաս Փոկասի ու Վարդաս Սկլե-

րոսի գլխավորությամբ [32, c. 217]¹:

Դեռ 969թ. կայսր Նիկեփորոսի սպանությունից հետո նրա եղբորորդի Վարդաս Փոկասը Կեսարիայում իրեն հռչակեց կայսր, սակայն պարտություն կրեց Հովհաննես Չմշկիկին խնամիացած Վարդաս Սկլերոսից, որը նշանակվել էր Արևելքի դոմեստիկոս: Չմշկիկի խորհրդավոր մահվանից հետո, երբ ողջ իշխանությունը կենտրոնացավ ներքինի Վասիլիոս Նովոսի ձեռքում, պաշտոնագուրկ Սկլերոսն ինքը բարձրացրեց հուժկու ապստամբություն (976-979թթ.)՝ մտադրվելով տիրանալ իշխանությանը: Նրան հարեցին հայազգի զորավարներ Միքայել Բուրցեսը, Ռոմանոս Տարոնիտեսը, Գրիգոր և Բագրատ Տարոնացի եղբայրները, Սահակ Վրահամիոսը, Կոստանդին Գավրասը, ծովակալ Միքայել Կուրտիկիոսը, որը ղեկավարում էր ապստամբների նավատորմը, և այլոք: Ապստամբների ուժերը մեծավ մասամբ բաղկացած էին հայերից, որոնք կայսրության արևելյան հատվածներում տիրապետող դիրքեր ունեին: Կառավարությանը հավատարիմ զորքերը՝ Պետրոս Փոկասի գլխավորությամբ, պարտություն կրեցին, ինչից հետո ապստամբները շարժվեցին Կոստանդնուպոլսի դեմ: Ճակատագրի հեգնանքով կառավարությունը Սկլերոսի դեմ բարձրացրեց իր հայրենի Կապադովկիայում քաղաքականապես ազդեցիկ Վարդաս Փոկասին: Ըստ էության, պրովինցիալ արիստոկրատների ներսում առաջ բերած այսպիսի պառակտման շնորհիվ միայն, այն էլ մեծ ջանքերի գնով հնարավոր եղավ ապստամբության ճնշումը: Շուտով, սակայն, այդ արիստոկրատիան (այդ թվում Վարդաս Սկլերոսը) համախմբվեց Փոկասի շուրջ, որը 987թ. հռչակվեց կայսր և նոր խոշոր ապստամբություն բարձրացրեց (987-989թթ.): Նրա թիկունքին կանգնեց ամբողջ Փոքր Ասիան և առաջին հերթին հայկական ուժերը: Կրկին կառավարական զորքերը պարտություն կրեցին, և մայրաքաղաքը նորից հայտնվեց վտանգի առջև: Երկու Վարդասներն առաջին անգամ քննարկում էին ֆեոդալական սկզբունքով կայսրության մասնատման հարցը. հաղթանակի դեպքում Փոկասին պետք է անցնեք Բյուզանդիայի եվրոպական հատվածը՝ Կոստանդնուպոլսով հանդերձ, Սկլերոսին՝ ասիականը²: Բարսեղ Բ կայսրին դրությունը հաջողվեց փրկել միայն Ռուսիայից եկած օգնական ուժերի ու մեծաթիվ եվրոպական վարձկանների միջոցով:

Սկլերոսի և Փոկասի ապստամբությունների ճնշումից հետո Բարսեղ Բ կայսրը դիմեց պրովինցիալ արիստոկրատների դեմ հալածանքների: Նրանցից շատերի տիրույթները բռնագրավվեցին, մյուսների վրա դրվեցին

¹ Ընդհանուր առմամբ, 976-1081թթ. տեղի են ունեցել մոտ 50 դավադրություններ ու խռովություններ [19, c. 154]:

² Փոկասը, սակայն, ուխտադրժորեն կալանավորեց Սկլերոսին՝ մտադրվելով միայնակ տիրանալ գահին [19, c. 157]:

ծանր ֆինանսական պարտույթներ, որոնք զգալի վնաս հասցրին կալվածատերերի տնտեսությանը¹: Ի հակակշիռ նրանց՝ Բարսեղն սկսեց ակտիվորեն հավաքագրել վարձկան (հիմնականում օտարերկրյա) գորքեր: Նրանց ծառայություններից կայսրությունն օգտվում էր նաև անցյալում, բայց միայն այդ ժամանակից սկսեց աճել նրանց դերը բանակում: Պրովինցիալ վերնախավից կորզված և հաղթական պատերազմներից ստացված միջոցներով կայսրը սիրաշահում էր զինվորներին, ինչպես և հոգևորականությանն ու քաղաքացիական պաշտոնեությանը՝ չխոչընդոտելով վերջիններիս կալվածքների աճին: Միաժամանակ կայսրն ամրապնդում էր իր իշխանությունը՝ միանձնյա տնօրինելով պետական գործերը:

Բարսեղի քաղաքականության արդյունքում թուլացած պրովինցիալ զինվորական վերնախավը շուրջ երեսուն տարով դադարեցրեց դիմադրությունը: Միայն 1020-ական թթ. սկսվեց դավադրությունների ու խռովությունների նոր շարք, որ տևեց գրեթե վաթսուն տարի: Դրանցից առաջինները շարունակում էին հիմնականում ղեկավարել գահի հայ թեկնածուները՝ Նիկեփորոս Փոկասը (1022թ.), Կոստանդին Դալասսենոսը (1028 և 1042թթ.), Գևորգ Մանիակեսը (1042թ.), Լևոն Թոռնիկյանը (1047թ.) և այլն: Սակայն այդ խռովություններն աչքի չէին ընկնում նախկին ուժգնությամբ: Հայկական ընտանիքներն էլ, որոնք X դարում իրենց վրա էին վերցրել զինված պայքարի ղեկավարումն ու պատասխան հարվածի հիմնական ծանրությունը, այժմ արդեն սկսում էին ակտիվությունը զիջել իրենց թիկունքում բարձրացող հունական տոհմերին: Քաղաքական պայքարի հերթական ահագնացման շրջադարձային կետ հանդիսացավ Կոստանդին Թ Մոնոմաքոսի կառավարման շրջանը (1042-1055թթ.), երբ իշխանությունները փորձեցին գնալ անհանգիստ զինվորական հրամանատարության փաստացի կործանման ճանապարհով: Թեմական ստրատեգուների լիազորությունները խիստ կրճատվեցին՝ նրանց իջեցնելով տեղական ամրոցների կայազորների պետերի աստիճանի: Թույլ չտալու համար կատաֆրակտների վերածումը պրովինցիալ ավագանու վասալների՝ նրանց զինվորական ծառայությունը փոխարինվեց դրամական վճարներով: Դրանցով պետությունը պահում էր վարձկանների պրոֆեսիոնալ բանակ, որի ղեկավարումը վստահվում էր ապաշնորհ, բայց իշխանություններին անսահման նվիրված ներքինիների: Կազմալուծվեցին նաև հայ նախարարների այն զինված ջոկատները, որոնք կայսրության ծառայության տակ էին անցել XI դարում Հայաստանի մեծ մասի բյուզանդական նվաճման հետևանքով: Այս միջոցառում-

¹ Ի դեպ, կայսրը հետևում էր գերված Վարդաս Սկլերոսի խորհրդին՝ ծառայությամբ ու հարկերով ծանրաբեռնել կալվածատերերին՝ թույլ չտալու նրանց ավելի գորեղանալ [19, c. 69]: Դատելով Սկլերոսի խորհրդից՝ պրովինցիալ ավագանին քաջ գիտակցում էր իր սոցիալական ուժը:

ներին Փոքր Ասիայի և Բալկանների զինվորական արիստոկրատիան պատասխանեց նոր դավադրություններով, քաղաքացիական պատերազմներով ու պետական հեղաշրջումներով, որոնց վերջնական արդյունքում 1081թ. իշխանության եկավ Կոմնենոսների հունական հարստությունը:

Բյուզանդիայի հետագա սոցիալ-քաղաքական զարգացումները դուրս են մեր հոդվածի հետաքրքրություններից: Բավարարվենք այն միտքը՝ վկայակոչելով, որ Կոմնենոսների հաղթանակն ուշացած եկավ. մի կողմից՝ արտաքին հարձակումները, մյուս կողմից՝ կայսերական քարացած համակարգն այդպես էլ թույլ չտվեցին Բյուզանդիային ելք գտնել ստեղծված իրավիճակից: Կոմնենոսների (1081-1185թթ.) ձեռնարկած միջոցները պետության վերակառուցման գործում հետևողական չեղան և ընդամենը հետաձգեցին կայսրության անկումը [19, c. 64; 10, c. 101]:

Հնարավոր է՝ Բյուզանդիան կփրկվեր, եթե X դարի երկրորդ կեսին հաղթանակ տաներ հայ տոհմիկների ղեկավարած պրովինցիալ ավագանին: Այդ հաղթանակը, սակայն, տեղի չունեցավ, քանզի դեռևս բացակայում էին առաջադեմ ուժերի անհրաժեշտ քաղաքական հասունությունն ու միասնությունը: Ինքնակալությունն էլ Մակեդոնական հարստության ժամանակ հույժ գորեղ էր և հետագայում էլ լիովին չհաղթահարվեց՝ մինչև կայսրության գոյության վերջը խոչընդոտելով ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը: Վարդասների հաղթանակն, իհարկե, ամենևին չէր նշանակի Բյուզանդիայի հայկականացում (այս կամ այն չափով): Ընդհակառակը, Բյուզանդիայում X-XI դարերից սկիզբ առած ֆեոդալականացման գործընթացը ենթադրում էր կայսրությունում էթնիկ գիտակցության աստիճանական վերելք և այդ հողի վրա ներքին տարանջատումներ: Հասկանալի պատճառներով, կայսրության ազգայնացումը պետք է ընթանար հունականացման ճանապարհով: Արդեն XI դարում կայսրությունում խտրություն էր դրվում հույնի և ոչ հույնի միջև, դատապարտվում էր հույն ստրուկ ունենալը, սկսում էր բացասաբար ընկալվել պետության բազմազգ բնույթը, ավելի ու ավելի հետևողականորեն նույնացվում էին «հույն» և «հռոմեացի» հասկացությունները [19, cc. 30, 207, 209; 32, cc. 83, 86]:

Այս գործընթացը բյուզանդահայերի վրա անդրադարձավ տարբեր կերպ: Կայսրությունում վաղուց ի վեր արմատացած և հիմնականում հունաբնակ տարածքներում ապրող քաղկեդոնական հայության (այդ թվում հայկական ծագման ավագանու ճնշող մեծամասնության) համար դա նշանակում էր ձուլում գերակշռող ժողովրդին: Կոմնենոսների օրոք, որոնք, ըստ երևույթին, նախապատվություն էին տալիս հունական ծագման արիստոկրատական ընտանիքներին, հայ տոհմիկները հիմնականում հայտնվում էին երկրորդ պլանի վրա: Կորցնելով նախկին դիրքերը բանակում՝

նրանք զբաղեցնում էին առավելապես վարչական ու հոգևորական պաշտոններ կամ մղվում էին պրովինցիա՝ մայրաքաղաքի կյանքից հեռու, կամ էլ, վերջապես, հեռանում էին պատմության ասպարեզից [26, cc. 154, 163-168]: Ընդհակառակը, կայսրության արևելյան հայաբնակ շրջաններում, ուր X-XI դարերում խիստ ստվարացել էր միաբնակ հայության թիվը և փոխարենը խստացել կայսրության ձուլիչ քաղաքականությունը, տիրապետող դարձան ազգամիջյան լարվածության աճն ու անջատողականությունը [20, pp. 51-52]: Վերջինիս դրսևորումը սելջուկյան նվաճումների պայմաններում (1070-1080-ական թթ.) հայկական իշխանությունների ստեղծումն էր: Նրանց մեջ առավել կենսունակ գտնվեց Կիլիկիայի հայկական պետությունը, ուր ավելի ուշ տեղափոխվեց բյուզանդահայ տոհմիկների որոշ մասը:

Ըստ էության, XI դարից հետո հայ-բյուզանդական քաղաքակրթական կապերը սկսեցին կորցնել նախկին ինտենսիվությունը: Ինքը՝ մասնատվող ու թշնամիների հարվածների տակ սեղմվող Բյուզանդիան, այլևս ի վիճակի չգտնվեց կատարելու քրիստոնյա աշխարհի քաղաքակրթական կենտրոնի դերը՝ աստիճանաբար զիջելով այն Արևմտյան Եվրոպային: Համապատասխան փոփոխություններ կրեցին (իհարկե, ոչ միանգամից) նաև Կիլիկիայում վերահաստատված հայկական պետության արտաքին քաղաքակրթական նախապատվությունները:

VI

Սույն հոդվածն, անշուշտ, հեռու է հայ-բյուզանդական հարաբերությունները մշակութաբանական տեսանկյունից ամբողջապես ներկայացնելուց: Սակայն նրանում կիրառված մոտեցումը, մեր ենթադրությամբ, թույլ է տալիս նոր լույսի տակ տեսնել ինչպես երկու երկրների միջև կապերը, այնպես էլ Բյուզանդիայի հայազգի գործիչների գործունեությունը: Այն հանգամանքը, որ Հայաստանում սեփական քաղաքակրթությունը ձևակերպվել է հարևան, այն էլ միմյանց հակադիր քաղաքակրթություններից ավելի ուշ, հաղորդել է նրան ճկունություն, դարձրել «բաց»: Հայաստանը կամ հայությունը, կարողանալով ապահովել իր ինքնատիպությունը, միաժամանակ մշակութային ակտիվ փոխանակության մեջ է մտել մյուսների հետ, ավելին՝ դարձել հարևանների միջև յուրատեսակ մշակութային միջնորդ և, վերջապես, հանձին իր այն ժամանակվա «սփյուռքի», մասնակցել հարևան քաղաքակրթությունների զարգացմանը: Այսպիսով, հայկական մշակույթն ուներ լավագույն տվյալներ՝ մասնակից լինելու գլոբալացման գործընթացներին: Հին ու միջին դարերի գլոբալացումների շարքում Հայաստանի համար առավել կարևոր նշանակություն ունեցավ բյուզանդական ընկերակցության

ստեղծումը: Քրիստոնեության ընդունումը Հայաստանում ու Արևմուտքում՝ մի կողմից, և իսլամի հաղթանակն Արևելքում՝ մյուս կողմից, Հայաստանի գլխավոր քաղաքակարթական գործընկեր դարձրին Բյուզանդիան (մինչև XI-XII դդ.): Երկու երկրները սուկ հարևաններ չէին: Մի քանի դար Բյուզանդիան հանդիսանում էր կենտրոնը քրիստոնեական այն ամբողջի, որի անբաժան մասն էր իրեն գիտակցում նաև հայությունը: Բյուզանդական կենտրոնական և հայկական լոկալ բնեռների ակտիվ փոխհարաբերությունները միայն խթանեցին երկուստեք հոգևոր զարգացումը: Միաժամանակ, բյուզանդական կենտրոնի գործառնությունը ծառայեց Արևմուտքում հայկական մշակութային ձեռքբերումների տարածմանը: Երկու պարագաներում էլ մեծ դեր ուներ կայսրությունում սոցիալապես ակտիվ հայության առկայությունը: Նրա ակտիվության արդյունքը ոչ միայն հայկական մշակութային, այլև, կարելի է ենթադրել, սոցիալական արժեքների ընդունումն էր Բյուզանդիայում: Այդ կայսրության բնորոշմանը մենք հարմար չգտանք կցել «հայկական» բառը: Չնայած հայկական արժեքների ազդեցությանը՝ բյուզանդական հասարակական հարաբերությունների առանցքում դրանք չէին ընկած: Ակտիվություն ցուցաբերող բյուզանդահայերն էլ չէին հանդիսանում քաղաքականապես իշխող ուժ որպես *էթնիկ խումբ* և հիմնականում բյուզանդական (հռոմեական) հզոր ավանդույթների հունադավան կրողներ էին: Միջնադարյան աշխարհայացք ունեցող և, առավել ևս, ունիվերսալիստական սկզբունքների վրա կառուցված Բյուզանդիայում էթնիկ ինքնագիտակցությունն ակնհայտորեն զիջում էր կրոնական ու պետական պատկանելության գիտակցմանը: Թերևս, բյուզանդահայերը, եթե նրանց դիտարկենք ամբողջությամբ, իրենց չէին գիտակցում որպես կայսրության առանձին էթնոքաղաքական սուբյեկտ: Առավել ևս չկար համախմբվածություն: Փոխարենը, ապագային կայսրության կյանքում նրանց տեսնում ենք սոցիալ-քաղաքական տարբեր ու հակադիր հոսանքների («բյուրոկրատներ» և «գորավարներ», պատկերամարտներ և պատկերապաշտներ, պաշտոնեական և ժառանգական արիստոկրատիա) միջև պայքարում, որն ընդհանուր ոչինչ չունեք հայկական ազգային շահերի հետ: Իսկ երբ Բյուզանդիան թևակոխեց ազգայնացման ուղին (X-XI դարերից), նրա միտումը դարձավ հենց հունականացումը, որին կուլ գնացին կայսրությունում խոր արմատներ գցած հայերը: Մյուս կողմից, սակայն, վերոշարադրյալն ընդգծում է Բյուզանդիայում հաստատված հայերի ընկալունակությունն օտար արժեքների նկատմամբ, հեշտ ինտեգրվելու ընդունակությունը, ուստի և՛ բարձր աստիճանի սոցիալիզացիան:

Համաշխարհային պատմությունն ընդհանրապես և հայոց պատմու-

թյունը մասնավորապես պարզորոշ ցույց են տալիս. հոգևոր զարգացման լավագույն հեռանկարներ կարող են ունենալ ուրիշ հասարակությունների հետ ակտիվ ստեղծագործական համագործակցության մեջ գտնվող ժողովուրդները: Այդպիսի համագործակցության հարացույց կարող է ծառայել միայն ազգային ինքնության մեջ երկու բնեռների՝ սեփական և ներմուծված արժեքների համաչափությունը: Այն միտված է ապահովելու տարբեր հասարակությունների փոխադարձ շահավետ ինտեգրումը: Հայաստանի պարագայում այս տեսանկյունից հույժ հետաքրքրական է Բյուզանդիայի հետ նրա կապերի պատմությունը: Այն վկայություն է օտար արժեքները հայկական հողի վրա ազգայնացնելու և, ընդհակառակը, սեփականն օտարին մատուցելու առումով: Այս տեսանկյունից հայ-բյուզանդական առնչություններում առկա բազմաթիվ կողմեր իրենց զուգահեռներն ունեն (կամ պոտենցիալ կարող են ունենալ) այսօրվա հայ իրականությունում: Ուստի այդ առնչությունների պատմությունից քաղվող դրական դասերը արդիական են մերօրյա խնդիրները լուծելիս: Ինչ վերաբերում է բյուզանդահայության ազգային նկարագրի ճակատագրին, այստեղ ուսուցանելին մեկ այլ հարացույցի գիտակցումն է. օտար ափերում հայտնված հայերի հայրենակենտրոն մտածողության անհրաժեշտությունը:

Հունվար, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Ստեփանյան Ա.*, Պատմության քաղաքակրթական չափումը // Հայոց պատմության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը՝ հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան. Զեկուցումների հիմնադրույթներ, Ե., 2003:
2. *Յուզբաշյան Վ.*, Բագրատունյաց շրջանի Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից, Պատմա-բանասիրական հանդես, N 1, Ե., 1975:
3. *Медведев И.*, Правовая культура Византийской империи, СПб, 2001.
4. *Культура Византии*, т. II, М., 1989.
5. Eusebius Caesariensis. Oratio tridecennalis, www.ucalgary.ca/~vandejsp/Courses/texts/eusebius/euseprai.html.
6. *Удальцова З., Литаврин Г.*, Возникновение и формирование феодальных отношений в Византии IV-XI вв. // *История средних веков*, т. I, М., 1990.
7. Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Ե., 1996:
8. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Ե., 1991:
9. *Laurent J.*, L'Arménie entre Byzance et l'islame depuis la conquête arabe jusqu'en 886, Lisbonne, 1980.

10. *Каждан А.*, Византийская культура X-XII вв., М., 1968.
11. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. Ս. Մալխասյանցի, Ե., 1968:
12. Հայկական Մովետական Հանրագիտարան, Ե., 1974-1987:
13. *Տեր-Ներսեսյան Ս.*, Բյուզանդիա և Հայաստան // Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, Ե., 1970:
14. *Der-Nersessian S.*, Armenia and the Byzantine Empire. A Brief Study of Armenian Art and Civilization, Cambridge, Mass., 1945.
15. *Удальцова З.*, Культура Византии IV-XV вв. // История средних веков, т. I, М., 1990.
16. The Cambridge Medieval History, Cambridge, 1966, vol. 4, The Byzantine Empire.
17. *Teteriatnikov N.*, Multiplication of the Chapels in Early Georgian and Armenian Churches and Their Significance for the Middle Byzantine Architecture, 6th Conference of Byzantine Studies, 1981, www.byzconf.org/1981abstracts.html
18. *Աղոնց Ն.*, Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա // Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:
19. *Литаврин Г.*, Как жили византийцы, СПб, 1997.
20. *Charanis P.*, The Armenians in the Byzantine Empire, Lisbon, 1963.
21. *Scriptores Historiae Augustae, Triginta tyranni, XXXII.3, Divus Aurelius, XXVII.1,* www.thelatinlibrary.com/sha.html
22. Պրոկոպիոս Կեսարացի, Գաղտնի պատմություն, թարգմ. Հ. Բարթիկյանի, Ե.:
23. *Բարթիկյան Հ.*, Հայկական նախարարական տոհմանվան եզակի հիշատակություն բյուզանդական աղբյուրներում // Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 1, Ե., 2002:
24. *Treadgold W.*, The Size of the Byzantine Army (300-900 A.D.), 16th Conference of Byzantine Studies, 1991, www.byzconf.org/1991 abstracts.html.
25. *Adontz N.*, Études arméno-byzantines, Lisbonne, 1968.
26. *Каждан А.*, Армяне в составе господствующего класса Византийской империи (XI-XII вв.), Е., 1975.
27. *Диль Ш.*, Основные проблемы византийской истории, М., 1947.
28. *Բարթիկյան Հ.*, Մեծ Լավրայի արաջնորդ Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունը // Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 1, Ե., 2002:
29. *Աղոնց Ն.*, Հայ Գիտական դեմքեր Բյուզանդիայում // Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:
30. *Кучма В.*, Военная организация Византийской империи, СПб, 2001.
31. *Աղոնց Ն.*, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987:
32. История Византии, С. Сказкина, т. II, М., 1967.

ОБ АРМЯНО-ВИЗАНТИЙСКИХ ЦИВИЛИЗАЦИОННЫХ СВЯЗЯХ

Артем Саркисян

Резюме

Вся мировая история и, в частности, история армянского народа, недвусмысленно свидетельствует: лучшими перспективами духовного развития обладают народы, находящиеся в активном творческом сотрудничестве с другими обществами. Парадигмой такого сотрудничества может выступать только пропорциональность двух полюсов национальной самобытности – собственных и заимствованных ценностей. Она призвана обеспечить взаимовыгодную интеграцию разных обществ. В случае Армении чрезвычайно важна история ее связей с Византией. Эта история – свидетельство усвоения чужих ценностей на армянской почве и, наоборот, представления собственных ценностей другим. С этой точки зрения, у многих аспектов армяно-византийских связей наблюдаются (или потенциально могут наблюдаться) параллели с нынешними армянскими реалиями. Следовательно уроки, извлекаемые из истории этих связей, актуальны при решении сегодняшних проблем. Что касается национальной самобытности византийского армянства, то здесь поводом для размышлений становится осмысление другой парадигмы: необходимость сохранения пропатриотического мышления армянами, оказавшимися вдали от родины.